# ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱ

## *ՄԵԿՆՈՒՄ*

*Սույն թվականի հունվարի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական-հայրապետական այցելությամբ մեկնեց Ֆրանսիա և Ավստրալիա:*

*Մեկնելուց առաջ Հայոց Հայրապետը, ըստ ավանդության, թափորով ուղղվեց դեպի Մայր Տաճար, ուր Իջման Սուրբ Սեղանի առջև առ Բարձրյալն առաքեց իր գոհաբանական և բարի երթի աղոթքը:*

*Ապա ավտոմեքենաների շարասյունը Հայոց Հայրապետին առաջնորդեց «Զվարթնոց» օդանավակայան:*

## *ԺԱՄԱՆՈՒՄ «ՇԱՌԼ ԴԸ ԳՈԼ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ*

*Առավոտյան, տեղական ժամանակով ժամը 07.10-ին, Երևան-Փարիզ չվերթով Փարիզի «Շառլ դը Գոլ» օդանավակայան ժամանեց Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գավազանակիր Անուշավան աբեղա Ժամկոչյանի ուղեկցությամբ:*

*Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Գյուտ արք. Նազգաշյանը, Մարսելի հայոց առաջնորդական փոխանորդ Տարոն եպս. Ճերեճյանը, Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ ու լիապոր դեսպան Վիգեն Չիտեչյանը, Փարիզի քաղաքապետի ներկայացուցիչը, Տիեզերական Պատրիարքության պատվիրակ միտրոպոլիտ Ժերեմին, քույր Եկեղեցիների հոգևոր պետերը, Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Գրիգոր եպս. Գաբրոյանը, Հայ Ավետարանական Եկեղեցու հովիվ վերապատվելի Ժիլբեր Լևոնյանը, Փարիզի և շրջանի հայոց եկեղեցիների վարչությունների և հոգաբարձությունների անդամներ, հայալեզու մամուլի /«Յառաջ», «Աշխարհ»/, ազգային միությունների և կազմակերպությունների /ՀԲԸՄ, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամ, Աղքատախնամ և այլն/ ներկայացուցիչներ, ինչպես նաև անհատ ազգայիններ:*

*Օդանավակայանի պաշտոնական հյուրերի ընդունելությունների սրահում, ժամը 7.30-ին, նախ Նորին Սրբությանը բարիգալստյան մաղթանքներ հղեց Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանը՝ առանձնակի շեշտելով, որ ֆրանսահայ գաղութը*

անհամբերությամբ ու սիրով էր սպասում այս ժամանմանը: Ամենայն Հայոց Հայրապետի այս այցելությունն ամենքի համոզումով պետք է լինի վերանորոգման և Քրիստոսավանդ սիրո ու հայեցի ապրելու մի լավագույն առիթ:

Այնուհետև ներկաներին՝ իր հոգևոր եղբայրներին, մասնավորաբար միտրոպոլիտ Ժերեմին, Հայ Կաթողիկե և Ավետարանական Եկեղեցիների առաջնորդներին, ինչպես նաև ներկա հավատացյալ բազմությանը, իր խոսքն ու ողջույնը հղեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Հենց սկզբում անդրադառնալով իր այցելության նպատակներին՝ Նորին Սրբությունն ի մասնավորի ասաց. «Այս պահը, կը խորհիմ, Մայր Աթոռի պատմության մեջ պիտի արձանագրվի որպես ֆրանսահայության օր, հաղորդության օր»: Ապա հիշեց, որ շատ հաճախ է անցել այս օրանավակայանից, բայց այս այցելությունն ուրիշ իմաստ ունի: Այն հատկապես ֆրանսահայության համար է և պիտի այցելի ամենուր՝ ժողովրդի հետ հանդիպելու ցանկալի ակնկալությամբ:

Շնորհակալություն հայտնելով հրավերի համար, Վեհափառ Տերը հայտնեց, որ իր հովվապետական այս այցելությունն ունի երեք հիմնական նպատակ.

ա/ Հաղորդություն ժողովրդի հետ, վասնզի Եկեղեցին հենց ժողովուրդն է: Մեծ հնարավորություն պիտի ունենա՝ հանդիպելու ժողովրդին, որպեսզի ոչ միայն խոսի նրա համար, այլ մանավանդ լսի նրան:

բ/ Զարկ տալ միջեկեղեցական հարաբերություններին՝ գործնական հողի վրա արժևորելու այդ հարաբերությունները:

գ/ Հանդիպումներ ունենալ պետական իշխանությունների հետ՝ շնորհակալության և գնահատանքի խոսքեր ուղղելով նրանց: Ֆրանսիան Առաջին աշխարհամարտից հետո սիրով է ընդունել հայերին, երբ նրանք նոր-նոր էին սկսում կազմակերպված համայնքային կյանք վարել և գաղթականի վիճակից անցնել քաղաքացու կարգավիճակին:

Գարեգին Ա Կաթողիկոսը շեշտեց հատկապես այն իրողությունը, որ թեև իր երջանկահիշատակ և անմոռանալի նախորդը՝ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, քանիցս այցելել էր Ֆրանսիա, սակայն երբեք բախտը չէր ունեցել դիմավորվելու ապատ ու անկախ Հայաստանի դեսպանի կողմից, ինչը տեղի ունեցավ այսօր:

Հավարտ մայրենի լեզվով արտասանած խոսքերի, Հայոց Հայրապետը ֆրանսերենով իր շնորհակալության և ողջույնի խոսքը հղեց Տիեզերական Պատրիարքության ներկայացուցչին՝ նշելով, որ Օրթոդոքս և Հայ Առաքելական Եկեղեցիները եղբայրներ են, քանի որ ունեցել են նույն ճակատագիրը: Ապա խնդրեց միտրոպոլիտին, որ իր ողջույնները փոխանցի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբազնություն Բարթուղիմեոս Ա-ին:

Այնուհետև հենց օրանավակայանի հյուրասրահում տեղի ունեցավ ճեպազրույց: Հայոց Հայրապետը պատասխանեց ներկա լրագրողներին հուզող հարցերին՝ մեկ անգամ ևս հանգամանալից մանրամասնելով իր հայրապետական-հովվապետական անդրանիկ այցելության հիմնական նպատակը:

## «ՖԻԳԱՐՈ» ԼՐԱԳՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՖՐԱՆՍԻԱ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆԸ

*Նախքան Գարեգին Ա Կաթողիկոսի ժամանումը Ֆրանսիա, տեղական «Ֆիգարո» /«Le Figaro»/ թերթն արդեն հանգամանորեն անդրադարձել էր Հայոց Հայրապետի կատարելիք այցելությանը, Արտաքին Գործոց նախարար Է. դը Շարեթի, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ հանդիպումներին, Հռոմի Պապի հետ ունեցած հանդիպմանը, ինչպես նաև տպագրել Վեհափառի հետ անցկացրած մի շատ կարևոր հարցազրույց:*

*Հարցազրույցում անդրադառնալով իր ուղևորության նպատակներին, Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ գլխավոր նպատակը անձամբ ու մոտիկից ճանաչելն է ֆրանսահայությանը: «Եկած եմ լսելու իմ ժողովուրդին ձայնը»,- ասաց Նորին Սրբությունը իր հայտարարություններում: Վեհափառ Տերն անդրադարձավ նաև վերջերս Հռոմի Կաթողիկե Եկեղեցու Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ իր ունեցած հանդիպումներին, համատեղ ստորագրած հայտարարությանը՝ շեշտելով, որ նրա մեջ կարևորությամբ նշված է երկու Եկեղեցիների միջև նոր գործակցության ճանապարհների բացման անհրաժեշտությունը:*

*Լրագրողի այն հարցին, թե ի՞նչ դաս եք քաղում այս դարից, որ հայոց ցեղասպանություն տեսավ, Նորին Սրբությունը պատասխանել է. «Դասը պարզ կու գայ Աւետարանէն. «Ամէն ոք, ով որ կը հաւատայ անոր, չի կորսուիր»: Ճիշտ է, որ մեկի՝ հայերուս համար Ի դարու սկիզբը յատկանշուեցաւ մահուան շուքով: Բայց դարու վերջը կը պայծառանայ անկախութեան և ապատութեան լոյսով: Դարս, որ կը վերջանայ, մեզ կը մղէ աւելի հոգածութիւն ունենալու կեանքին, քան նիւթին հանդէպ, աւելի ճիգ թափելու խաղաղութեան, քան՝ կէնքի, նուաց ապառում՝ մենք մեկի համար եւ աւելին բաժնում ուրիշներու, աւելի տարողութիւն տալ՝ «Երկինքը աշխարհի վրայ» եւ նուաց կարևորություն՝ «առանց երկինքի աշխարհին»:*

## ԺԱՄԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԱՆՈՑ

*Օդանավակայանից շքախումբը Ամենայն Հայոց Հայրապետին մեծ շուքով առաջնորդեց դեպի հյուրանոց:*

*Այստեղ, հյուրանոցի մուտքի մոտ, Նորին Սրբությանը, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի անունից, դիմավորեց և ողջույնի ու բարիգալստյան խոսք ասաց Ֆրանսիայի կառավարության խորհրդատու դեսպան պրն. Լյուսիեն Շամպիոնուան:*

*Պատասխան խոսքում Հայոց Հայրապետը խնդրեց իր շնորհակալությունը փոխանցել Ֆրանսիայի իշխանություններին՝ այսքան ջերմ ու սիրալիր ընդունելության համար:*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՍԵՆԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

*Նույն օրը, կարճատև հանգստից հետո, տեղական ժամանակով ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետին ընդունեց Ֆրանսիայի Սենատի նախագահ Ռընե Մոնորին:*

*Զրույցի ընթացքում երկուստեք շոշափվեցին ղարաբաղյան հակամարտության խաղաղ ճանապարհով կարգավորմանը, Հայաստանի ներկա կացությանը, հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամությանն առնչվող հարցեր: Դարավոր պատմություն ու մշակույթ ունեցող հայ ժողովուրդը ճանաչված է ողջ աշխարհում, - նշվեց ծավալված զրույցում: Ֆրանսիան ևս քաջատեղյակ է հայ ժողովրդի ապրած կյանքին և անցած պատմական ուղուն, որը իր դերն ու նշանակությունն ունի նաև ֆրանսիացի ժողովրդի կյանքում:*

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՀԵՐՎԵ ԴԸ ՇԱՐԵԹԻ ՄՈՏ

*Օրվա երկրորդ կեսին, ժամը 16.30-ին, Նորին Սրբությանն ընդունեց Ֆրանսիայի Արտաքին գործոց նախարար Հերվե դը Շարեթը: Հանդիպմանը ներկա էին նաև լրագրողներ: Վեհափառ Հայրապետը, պատասխանելով նրանց հարցերին, մանրամասնեց իր այցելության նպատակները:*

*Ապա նախարար Էրվե դը Շարեթի հետ ունեցած զրույցում թե՛ Հայոց Հայրապետը և թե՛ նախարարը կարծիքներ փոխանակեցին երկու ժողովուրդների հարաբերությունների առնչությամբ, շեշտեցին բարեկամության ու Քրիստոսավանդ սիրո կարևորությունը:*

*Երկխոսության մի կարևոր բաժինը գրավեց Ֆրանսիայի դերի քննարկումը Ղարաբաղյան հարցի լուծման մեջ, քանի որ Ֆրանսիան համանախագահելու էր Մինսկի խմբում ԵՀԱԿ-ի կողմից, որը զբաղվում է Ղարաբաղի հարցով:*

## ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Տեղական ժամանակով ժամը 18.20-ին Արտաքին գործոց նախարարությունից Նորին Սրբությունը մեկնեց Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցի, ուր մեծ շուքով ու ցնծությամբ դիմավորվեց ֆրանսահայության կողմից:*

*«Հրաշափառ»-ով մուտք գործելով Մայր Տաճար, Հայոց Հայրապետն առաջնորդվեց դեպի Ավագ Խորան՝ իր հայրապետական պատգամը տալու ներկա խուռներամ հավատավոր բազմությանը:*

*Մայր եկեղեցի էին ժամանել նաև Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպանը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ և այլ հյուրեր:*

*Նախ Գյուտ արք. Նազգաշյանը իր և ֆրանսահայության*

անունից բարիգալատյան խոսք ուղղեց Նորին Սրբությանը՝ այս օրհնաբեր այցելության առիթով, հավարտ որի ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը:

«Փառք կուտամ Աստուծո, որ պարգևած է ինձ նման օր մը, որ դեռ առավոտյան աչքերս բացեցի Արարատին նայվածքին դիմաց, Լուսավորչի տեսիլքովը լուսավորված, մեր բոլորին հոգևոր կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տաճարին կամարներուն ներքև ու իրիկունը կգտնվիմ Փարիզի եկեղեցիին մեջ ու կտեսնեմ նույն ապգին, նույն Եկեղեցիին անդամները»,- ասաց Նորին Սրբությունը և այնուհետև ավելացրեց,- «Տիեզերքի ամենեն մեծ ուժը սերն է, սերը Աստուծո, որ սիրով կթարգմանվի մարդոց կողմե և մարդոց մեջ»:

Նորին Սրբությունը մեկ անգամ ևս հիշելով օրվա ընթացքում ունեցած իր անմոռանալի հանդիպումները, խոսքն ավարտեց հայապգի մեծ բարերար Ա. Մանթաշյանին ուղղված երախտիքի, ոգեկոչման ու շնորհակալանքի խոսքով՝ Փարիզի Մայր եկեղեցուն, ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ցուցաբերած օգնության համար:

Վերջում եկեղեցու առաջնորդարանում տեղի ունեցավ աջահամբույր:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 24-ին, առավոտյան ժամը 10.30-ին, Փարիզի հայոց առաջնորդարանի «Ֆրենկյան» սրահում տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի մամլո ասուլիսը, որին ներկա էին մեծ թվով /մոտ 50/ հայ և ֆրանսիական մամուլի ներկայացուցիչներ, հեռուստալրագրողներ:

Ասուլիսը ղեկավարում էր «Լը Փուան» /«Le Point»/ ֆրանսիական շաբաթաթերթի պատասխանատուներից Քրիստիան Մակարյանը:

Պրն. Մակարյանը, ողջունելով Վեհափառ Հայրապետին, ամփոփ ներկայացրեց Նորին Սրբության այցի նպատակները: Ապա ֆրանսերենով հավուր պատշաճի բացատրություններ տվեց Վեհափառ Հայրապետը: Նշելով, որ եկել է ճանաչելու իր ժողովրդին, Գարեգին Ա Կաթողիկոսն առանձնակի կերպով շեշտեց, որ Հայաստանը չպետք է համարել միայն պատմության մի մասնիկը: Ճիշտ է, թեև միշտ շեշտվում է Հայ Առաքելական Եկեղեցու անցած 1700-ամյա պատմական ուղին, բայց այն նաև ապրող Եկեղեցի է և, խորհրդային համակարգի 70 տարվա անհավատության շրջանից հետո, այսօր անցնում է նոր ժամանակների միջով, ապրում վերածնության ու վերակերտման շրջան: Շարունակելով խոսքը, Վեհափառ Տերն ավելացրեց, որ իր Կաթողիկոսության մոտ երկու տարվա ընթացքում ունեցել է երեք նպատակ. առաջինը Հայոց աշխարհի նորովի դարձն է դեպի հայրերի հավատքը, երկրորդը՝ Եկեղեցիների համեղբայրական /էկումենիկ/ հարաբերությունների մշակումը և, վերջապես, երրորդը՝ հայոց շինարար ձեռքի թռիչքով կանգնեցված դարավոր եկեղեցիների վերանորոգման և նորերի կառուցման գործը: Այս առիթով

նա հիշատակեց Երևանում կառուցվող Մայր եկեղեցին, ուր մոտ 1700 հավատացյալ միանգամից իրենց աղոթքն առ Աստված կառաքեն՝ ի սեր և ի խաղաղություն համայն քրիստոնյա աշխարհի:

Տրված բազմաբնույթ հարցերը հիմնականում վերաբերում էին Հայաստանի ներկա տնտեսական և հոգևոր կացությանը, աղանդավորական շարժումներին, Վեհափառ Հայրապետի վերջերս Հռոմ կատարած այցելությանը, Հռոմի Կաթողիկե Եկեղեցու Պետի հետ ստորագրած համատեղ հայտարարությանը, Հայ Եկեղեցու ներկա խնդիրներին և այլն: Ֆրանսիական լրագրողներին առավելաբար հետաքրքրում էր Եկեղեցիների համեղբայրությունը, այս ոլորտում Գարեգին Ա Կաթողիկոսի ունեցած հանդիպումները, իսկ հայկական լրատվության ներկայացուցիչներին՝ Հայաստանյայց Եկեղեցու ներքին հարցերը, հայության միասնության ամրապնդման կենսական անհրաժեշտությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մանրամասնորեն պատմեց Հռոմի Պապի հետ ունեցած հանդիպման, ստորագրած Հայտարարության մասին: Նորին Սրբությունը շեշտեց, որ «Վերջին երեք տասնամյակներին քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների աստվածաբանների միջև գիտական խոսակցություններ են տեղի ունեցել, որոնք հանգեցրել են այն եզրակացության, որ Քրիստոսի անձի հասկացողության մեջ ըստ էության հիմնական տաբերություններ չկան: Այսուհանդերձ, հաճախ կշփոթվեին «միություն» և «միակերպություն» հասկացությունները: Նպատակը առաջինն էր ու արդեն կանապանությունը միշտ ալ գոյություն ունեցած էր քրիստոնեության մեջ: Վտանգը կանապանությունը բաժանումի վերածելուն մեջ կկայանար»:

Պատասխանելով այն հարցին, թե իսլամական կրոնը դավանող հարևաններով շրջապատված լինելով, դժվար չէ՞ արդյոք քրիստոնյա ժողովրդի հոգևոր իշխանությունը ստանձնելը, Վեհափառ Տերն ասաց. «Հայաստանյայց Եկեղեցին Է դարեն ի վեր միշտ նույն վիճակին մեջ գտնված է և լավ հարաբերություններ մշակած է հարևան երկիրներու հետ: Իսկ ներկայի մեծագույն ապդակը կկազմեն նոր կոչումները և հատկապես 70 տարի իրմե հեռու պահված իր հավատքը ճանչնալու ժողովրդին ծարավը: Խորհրդային շրջանին Հայաստան մեկ ճեմարան մը ուներ, այսօր՝ երեք: Անոնց ուսուցումը առավելաբար կրոնական հիմեր ունի, մինչդեռ խորհրդային շրջանին որպես կարկ կտրվեր առավելաբար հայագիտությանը»:

Այնուհետև, պատասխանելով հաջորդ հարցին, Նորին Սրբությունը ասաց, որ 1700-ամյակի տոնակատարությունը մեր ժողովրդի ինքնաճանաչման առիթ պիտի լինի: Իսկ ինչ վերաբերում է Մայր եկեղեցու շինությանը, ապա այն պետք է իրականանա համաժողովրդական մասնակցությամբ և հիմնականում՝ նվիրատվություններով: Օրինակ՝ մեծ բարերար ու ազգասեր Ալեք Մանուկյանի կավակները խոստացել են հարգել իրենց հոր հանձնառությունը: Գարեգին Ա Կաթողիկոսը անհրաժեշտություն համարեց այդ տաճարի շինությունը Երևանի համար, ուր եղած եկեղեցիներից ամենամեծն անգամ հազիվ 200 հավատացյալ կարող է պարփակել:

ՏՁԷ ԿԿՀՍՂԱՍ ՁՂՇՍ ԷՈԵՈՊՈՂ ԿՏՈՂՁՈ

ՂՈԷՁԿՀՍՏՁԱՈՀՂՈԷ ԿԷՈԿՈՂՈՀՁ ՈՀՍԱԿԵՂՈԷ

ՏՁԷ ԿՏՁԱՌՈՅՈՆՈՅ ԿՇԿԱՄՓ ՌԱՍԱՎԵՂՈԷ

Պատասխանելով առաջադրված հարցերին՝ Նորին Սրբությունն արտահայտվեց նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն հուզող խնդիրների մասին՝ մասնավորապես շեշտելով Հայաստանում աղանդների կողմից ծավալված մարդորսությունը: Այն միայն Հայաստանին բնորոշ հարց չէ: Աղանդները ոչինչ չեն կարող անել այն երկրում, որի ժողովուրդը պատրաստվում է տոնախմբել իր համընդհանուր դարձի 1700-ամյակը: Հայ Եկեղեցին հոգեորության այդ պատուհասին դեմ-հանդիման է դուրս եկել՝ իր առաքելությունը կորացնելով: Ճեպակրույցին ներկա էին Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանը, Մարսելի հայոց առաջնորդ գերշ. Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանը, Փարիզում Հայաստանի արտակարգ և լիապոր դեսպան Վիգեն Չիտեչյանը, ինչպես նաև պաշտոնատար այլ անձինք:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՊԱՊԱԿԱՆ ՆՎԻՐԱԿԻՆ

Նույն օրը, ժամը 13.00-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառն իր շքախմբով այցելեց և ճաշի հյուրն եղավ Ֆրանսիայում Պապական նվիրակ Անժելո Տագլիաֆերրեի: Երկուստեք փոխանակված ողջույնի խոսքերից հետո, ծավալվեց մտերմիկ զրույց, հընթացս որի հիշատակվեցին Հայոց Հայրապետի հռոմյան այցելությունը, Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ ունեցած հանդիպումները, ինչպես նաև մոտ ապագայում նախատեսված խնդիրներին առնչվող հարցերը: Խոսվեց նաև Հայաստանի ներկա կացության, հայ ժողովրդի այսօրվա կրոնական կյանքի և Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու մասին:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԼՖՈՐՎԻԼ

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ, ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՌԸՆԵ ՌՈՒՔԵԻ ՀԵՏ

Հունվարի 25-ին, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբի ուղեկցությամբ մեկնեց Փարիզից ոչ հեռու գտնվող Ալֆորվիլ արվարձան:

Ասենք, որ մինչ Ալֆորվիլ մեկնելը, Նորին Սրբությանն ընդունեց Պապական նվիրակը, ապա Ֆրանսիայի Բողոքական Եկեղեցիների Համադաշնության Կենտրոնը:

Այստեղ՝ Ալֆորվիլում, Նորին Սրբությանը դիմավորելու էր եկել քաղաքի ողջ հայությունը: Մեքենաների շարասյունը կանգ առավ քաղաքապետարանի առջև, որի մուտքի մոտ Ալֆորվիլի քաղաքապետ, Սենատի անդամ պրն. Ռընե Ռուքեն, դիմավորելով Նորին Սրբությանը, նրան առաջնորդեց քաղաքապետարանի հանդիսությունների սրահ, որ բարիգալստյան ջերմ խոսքեր ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ նրա այցելությունը բացառիկ դեպք և պատմական համարելով քաղաքապետարանի տարեգրության մեջ:

134-37

Պրն. քաղաքապետը շեշտեց, որ Վեհափառ Հայրապետն իր անձի մեջ համատեղում է մտավորականին, երկիրուության մարդուն և շնորհակալություն հայտնեց նրան՝ Աշտարակ քաղաքում «Մեկոն Դը Ամիթե Ֆրանկո-Արմենիեն» ծրագրին կորավիգ կանգնելու համար: Պրն. Ռուքեն ավելացրեց, որ Ալֆորվիլը «փոքրիկ Հայաստան է, ուր հայարավոր հայեր իրենց նպաստն են բերում քաղաքի բարգավաճմանը և կարգացմանը կանապան ճյուղերում»:

Ի պատասխան քաղաքապետի խոսքերի, Նորին Սրբությունն ասաց. «Ալֆորվիլը մի տեսակ Հայաստանի մանրանկարն է»՝ իր հետագա խոսքում շեշտելով, որ հայ ազգն այլևս չպետք է ներկայացվի որպես ջարդված ազգ՝ այլ վերահառնած ազգ: Իսկ Հայաստանն էլ սոսկ թանգարան չէ բաց երկնքի տակ: Ապա Հայոց Հայրապետն անդրադարձավ հայ-ֆրանսիական հարաբերությունների կարևորությանը՝ միաժամանակ կոչ անելով ներկաներին աջակցել ու իրենց նպաստը բերել Ֆրանսիայի Տան («Մեկոն Դը Ամիթիե Ֆրանկո-Արմենիեն») շինարարական աշխատանքներին, որ մոտ ապագայում պիտի իրականանա «Աշտարակի Տուն» հիմնադրումով:

Հանդիպմանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնատարներ, մեծ թվով լրագրողներ և բազմաթիվ հավատացյալներ:

Այստեղից Հայոց Հայրապետն առաջնորդվեց դեպի Սրբոց Նահատակաց հուշակոթող, ուր ծաղկեպսակ կետեղեց, ինչպես նաև կատարեց հոգեհանգստյան կարգ:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԼՖՈՐՎԻԼԻ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Քաղաքապետարանից մեքենաների շարասյունն ուղևորվեց դեպի Ալֆորվիլի Ս. Պողոս-Պետրոս հայկական եկեղեցի: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր նաև քաղաքապետ պրն. Ռուքեն: Ճանապարհին Վեհափառ Հայրապետը հոգեհանգստյան պաշտոն կատարեց Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող Նահատակաց հուշարձան-խաչքարի առջև, ինչպես նաև կետեղեց ծաղկեպսակ:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու մոտ Հայոց Հայրապետին դիմավորեց հավատացյալների հոծ բազմությունը՝ գլխավորությամբ հոգևոր հովիվ Ներսեհ ծ. վրդ. Բապուճյանի: «Հրաշափառ»-ով մուտք գործելով տաճար, Նորին Սրբությունն առաջնորդվեց դեպի Խորան, որտեղից և ներկաներին հղեց իր հայրապետական պատգամը՝ ի մասնավորի նշելով. «Փառք և գոհություն՝ կընծայեմ Բարձրյալ Աստծուն, որ ինձի շնորհեց այս հրճվալից պահը՝ ձեզի հետ աղոթելու Աստուծո տան այս կամարներուն ներքև:

Ձեզի կբերենք մեր հայության շունչը Սուրբ Էջմիածինեն, որուն անունը երբ կլսեք, որուն անունը երբ կարտասանեք, գիտցեք, որ 17 դարեր ձեզի կնային: 1700 տարիների աչքերը բացված են ձեզ վրա, ապրող հայության վրա: Այսօր ես կու գամ ձեր Ծննդավայրեն՝ Սուրբ Էջմիածնեն: Սուրբ Էջմիածինը հայ ժողովրդի՝ որպես քրիստոնյա ժողովուրդ, ծննդավայրն է: Մեկ խոսքով, կուզեմ ըսել, որ Սուրբ Էջմիածինը հայոց Բեթղեհեմն է»:



ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ՓԱՐԻԶԻ ԿԱՐԴԻՆԱԼ ԼՅՈՒՍՏԻԺԵԻ ԿՈՂՄԻՑ
ՓԱՐԻԶԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐԻ ՄՈՒՏՔԻՆ

ՄԵԾԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՇՈՒՊ Ս. ՈՒԹՈՒՄԻ ՎԵՂԻՒՍՊԱՏ

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱԼՖՈՐՎԻԼԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Այնուհետև Վեհափառ Հայրապետն այցելեց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հարևանությամբ գտնվող Ս. Մեսրոպ հայկական կրթարան, ուր արտառուչ հանդիպում ունեցավ ուսուցչական կազմի և աշակերտության հետ: Դպրոցի համերգասրահում, ի պատիվ Նորին Սրբության, ներկայացվեց համերգային հարուստ հայտագիր:

Համերգային հայտագրից հետո Վեհափառ Հայրապետն օրհնեց մանուկներին, հորդորեց սովորել հայոց հինավուրց ու ոսկեղենիկ լեզուն, լինել ակնիվ, նվիրյալ, ուսումնատենչ աշակերտներ, պարտաճանաչ քաղաքացիներ ֆրանսիական հյուրընկալ երկրի ու անձնդիր մշակներ Հայաստան Հայրենիքի:

Հանդիպմանը ներկա էին նաև Ալֆորվիլի քաղաքապետ Ռընե Ռուքեն և քաղաքապետարանի այլ պաշտոնյաներ:

Վերջում Ամենայն Հայոց Հայրիկն իր կավակաց, դպրոցն ավարտելուց հետո, հրավիրեց Մայր Հայրենիք և Սուրբ Էջմիածին, որպեսզի այնտեղ շարունակեն իրենց կրթությունն ու հայեցի դաստիարակությունը:

## ՃԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ս. Մեսրոպ կրթարանից Նորին Սրբության գլխավորած շքախումբը վերադարձավ քաղաքապետարան, ուր, ի պատիվ Նորին Սրբության, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Ծավալված մտերմիկ զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը բարձր գնահատեց քաղաքի ղեկավարության և ալֆորվիլաբնակ հայության աշխատանքը՝ հորդորելով նրանց միշտ սիրով ապրել կողք-կողքի, ինչպես որ եղել է մինչև այժմ, միասին մաքառել դժվարությունների դեմ և մեկտեղ տոնել հաղթանակները: Նորին Սրբությունը տեղաբնակ հայությանը կոչ արեց նաև համախմբվել հարազատ Եկեղեցու շուրջ և ավելի սերտ կապվել Հայրենիքին, ապրել ու շնչել նրանով, հաղորդակից լինել նախնյաց սրբազնասուրբ ավանդներին:

Իր խոսքի վերջում Վեհափառ Տերը հրավիրեց բոլորին՝ մասնակցել այս տարվա օգոստոսին Հայաստան կատարվելիք ուխտագնացությանը՝ այս կերպ նորոգելով իրենց սերն ու հավատքը:

## ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՍԻ ԼԵ ՄՈՒԼԻՆՈ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՍԻ-ԼԵ-ՄՈՒԼԻՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ-ԵՐԵՍՓՈԽԱՆ ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻԻ ՀԵՏ

Նույն օրը, տեղական ժամանակով ժամը 15.30-ին, Վեհափառ Հայրապետը, շքախմբի ուղեկցությամբ, մեկնեց Իսի-Լե-Մուլինո, ուր նախ այցելեց քաղաքապետարան և հանդիպեց քաղաքապետ Անդրե Սանտինիին ու պաշտոնատար այլ անձանց:

Նախքան պաշտոնական ընդունելությունը, քաղաքապետի աշխատասենյակում տեղի ունեցավ 20 րոպեանոց առանձնակրույց:

Կարճատև կրոյցից հետո հանդիսությունների սրահում, պաշտոնատար անձանց ու թղթակիցների ներկայությամբ, փոխանակվեցին բարեմաղթանքի խոսքեր և հուշանվերներ:

Այստեղ պարոն քաղաքապետը հիշեց Հայոց Կաթողիկոսի հանդիպումը Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ, իր ուրախությունը հայտնեց Վեհափառ Հոր այս պատվաբեր այցելության համար, ապա Նորին Սրբությանը նվիրեց քաղաքի ոսկյա հուշամեդալը:

Վեհափառ Հայրապետը, քաղաքապետի պատասխան խոսքից հետո, շեշտեց, որ հայ ժողովուրդն այլևս միայն ցեղասպանության ենթարկված ժողովուրդ չէ, այլ իր անկախ պետականությամբ դեպ ապագան նայող ու ծաղկում ապրող երկրի տեր մի ժողովուրդ:

Ապա Գարեգին Ա Կաթողիկոսն իրեն ուղեկցող շքախմբի հետ ուղևորվեց դեպի քաղաքի նորաբաց «Թարգմանչաց» հայկական վարժարան:

## ՆՈՐԱԲԱՑ «ԹԱՐԳՄԱՆՉԱՑ» ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Այստեղ նորաբաց «Սրբոց Թարգմանչաց» մանկապարտեզի փոքրիկները ավանդական աղ ու հացով և մեծ խանդավառությամբ դիմավորեցին Ամենայն Հայոց Հովվապետին՝ խորը հուզմունքով ունկնդրելով իրենց ուղղված հայրապետական օրհնություններն ու պատգամները:

Դոկտոր Վիգեն Կարապետյանի ողջույնի խոսքից հետո, օրհնելով կրթօջախը, Նորին Սրբությունը խոսեց Հայոց երկրի, հայ ժողովրդի, հայ դպրության, հայերեն ոսկեդենիկ լեզվի ու հայեցի դաստիարակության մասին, հայրաբար խորհուրդ տվեց սաներին՝ սիրել Մայր Հայրենիքը, իրենց մանուկ հոգիներում անթեղել այդ սերը, որպեսզի վաղը, երբ մեծանան, այդ սիրով վառված գան Հայաստան և իրենց նպաստը բերեն Հայոց վերանկախացյալ Հայրենիքի ու Մայր Եկեղեցու ծաղկուն արշալույսների առավել պայծառացմանը:

## Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Դպրոցից Վեհափառ Հայրապետին առաջնորդեցին դեպի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի, ուր դիմավորվեց հավատացյալների հոծ բազմության կողմից՝ տեղի հովիվ Սյուռոն վրդ. Գլվրգյանի առաջնորդությամբ: Կանոնական աղոթքից հետո Նորին Սրբությունը ներկաներին հղեց իր հայրապետական պատգամը:

Իր խրատ-հորդորում անդրադառնալով Հայ Եկեղեցուն, հայոց ապատ ու նորանկախացյալ Հայրենիքին, վերապարթոնք ապրող հայ ժողովրդին, Նորին Սրբությունը Ս. Աստվածածին եկեղեցում ասաց. «Կյանքը կյանքին մեջ վերանձնավորված ապրումն է: Եթե ես չգիտնամ, թե ինչու համար կապրիմ, ինչո՞ւ է իմ ապրելը: Խոտի կյա՞նք մըն է: Անշո՛ւշտ ոչ: Կյանքը իմաստ կառնե, նպատակային կդառնա, երբ այն կարժևորվի, կգնահատվի և կդառնա իդեալ»:

## ՀԱՄԵՐԳ ԻՍԻ-ԼԵ-ՄՈՒԼԻՆՈՅԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց Իսի-Լե-Մուլինոյի «Համագումարների պալատ»-ում կազմակերպված հանդիսությանը: Համերգային ճոխ ծրագրին մասնակցում էին «Նավասարդ» պարի համույթը, դպրոցասիրաց մանկական երգչախումբը և Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մեներգչուհի Անահիտ Միհթարյանը:

Համերգին ներկա էին նաև քաղաքապետ Անդրե Սանտինին, պաշտոնատար այլ այրեր:

Հանդիսավար դոկտոր Վիգեն Կարապետյանի բացման խոսքից հետո, ներկաներին արտառուչ խոսքեր ուղղեց քաղաքապետ Անդրե Սանտինին՝ մեկ անգամ ևս գնահատելով հայ գաղութի դերը տվյալ շրջանում:

Քաղաքապետի խոսքին հաջորդեց գեղարվեստական հարուստ հայտագիրը:

Համերգի ավարտին ներկաներին իր ոգեշունչ պատգամը տվեց Նորին Սրբությունը:

«Մարդ երկու անգամ կը ծնի, - ասաց Վեհափառը, - նախ երբ աշխարհ կու գայ, ապա երբ գիտակից կը դառնայ: Եւ այն ատեն իր կեանքը կ'իմաստաւորուի»: Ընդգծելով գիտության կարգացման կարևորությունը, Նորին Սրբությունը մեջբերեց անցյալ դարի հայ հոգևորականներից մեկի խոսքը, որը 1853-ին այցելելով Փարիզ, երբ դեռ այնտեղ ոչ մի հայկական եկեղեցի չկար ասել էր. «Մարդ առանց ուսման և դաստիարակութեան թէև մարդու կերպարանք ունի, բայց մարդ չէ» և ավելացրեց. «Գիտութիւնը, դպրոցը մտքի մկրտութիւնն է: Դպրոցը տաճար մըն է՝ հրաշք գործող»:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փարիզ վերադառնալուց առաջ Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Իսի-Լե-Մուլինոյի Հայ Ավետարանական եկեղեցի, որտեղ Վեր. Ժիլբեր Լևոնյանը ջերմ խոսքերով ողջունեց Հայոց Հայրապետին: Այնուհետև Նորին Սրբությունը, օրհնելով ներկաներին, պատգամեց, որ Հայ Ավետարանական Եկեղեցու կավակները միշտ մնան ի հաղորդության Մայր Եկեղեցու ավանդական և ավետարանական հոգևոր աղբյուրին:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՓԱՐԻԶԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունվարի 26-ի կիրակին շատ երկար կմնա փարիզահայերի հիշողության մեջ: Այդ օրը ողջ հավատավոր հայությունն շտապում էր Ս. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցի, ուր մատուցվելու էր հայրապետական Ս. Պատարագ:

Առավոտյան ժամը 10.00-ին Նորին Սրբությունը, «Խորհուրդ խորին» շարականի հնչյունների ներքո, առընթերակայությամբ

Նարեկ և Տարոն սրբազանների և ողջ հոգևոր դասի ուղեկցությամբ, մեծ շուքով մուտք գործեց Մայր եկեղեցի:

Հայրապետական Ս. Պատարագին ներկա էին Էքս-ան-Պրովանսի արքեպիսկոպոսը, որ նաև Ֆրանսիայի Եպիսկոպոսական ժողովի նախագահն է, Տիեզերական Պատրիարքության, Ռուս Ուղղափառ, Հույն, Մարոնիտ, Ավետարանական և բոլոր քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, Հայ Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Գաբրոյանը և վերապատվելի Ժիլբեր Լևոնյանը, Ֆրանսիայում << արտակարգ և լիապոր դեսպան Վ. Չիթեչյանը, ինչպես նաև բարձրաստիճան շատ պաշտոնյաներ:

Արարողության ընթացքին Վեհափառ Հայրապետը քարոզով դիմեց կարոտաբաղձ հավատացյալներին: Ապա, ի հիշատակ սույն այցելության, Փարիզի առաջնորդ Գյուտ արք. Նազգաշյանին նվիրեց Ս. Էջմիածնի պատկերով արծաթե սկիհ, որպեսզի ամեն անգամ, երբ հավատավոր ֆրանսահայը մոտենա հենց այս սկիհից առնելու Ս. Հաղորդությունը, իր հոգու աչքով տեսնի Ս. Էջմիածնի մշտավառ կանթեղը, որտեղից լուսավորչահաստատ հավատքի շողերն են տարածվում աշխարհասփյուռ հայության վրա, օգնում նրանց՝ քրիստոնյա հայ մնալու պատմության բոլոր քառուղիներում: Եվ ճաշակելով մեր Տիրոջ մարմինն ու արյունը, նրա հետ ճաշակի նաև Ս. Էջմիածնի քաղցրությունը, լինելով նրա հետ սերտ հաղորդության և միության մեջ:

Վեհափառ Հայրապետը մասնավորաբար ողջունեց քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ ուրախություն հայտնելով նրանց ներկայության համար:

Շարունակելով, Նորին Սրբությունն իր խոսքը կենտրոնացրեց մեկ հիմնական գաղափարի վրա՝ դպրոցը, համալսարանը և Եկեղեցին ապգի համար հոգևոր հաց են: Վերջում, անդրադառնալով հայ ժողովրդի պատմությանը, Վեհափառը շեշտեց, որ այդ պատմությունը հոգեկանի հաղթանակն է նյութեղենի վրա:

Հավարտ Ս. Պատարագի, տեղի ունեցավ աջահամբույր: Ապա եկեղեցուն հարակից սրահում տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Ֆրանսիայում հավատարմագրված դիվանագետներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև ֆրանսահայ համայնքի անդամներ:

Ճաշկերույթի ընթացքում, բոլոր հյուրերի ներկայությամբ, Վեհափառ Հայրապետը «Ս. Սահակ-Մեսրոպ» շքանշանով պարգևատրեց «Յառաջ» թերթի վաստակավոր խմբագիր Արփիկ Միսակյանին՝ բարձր գնահատելով վերջինիս ապգանվեր ու հայապահպան գործը:

Սենք նաև, որ Նորին Սրբությունը խորին ակնածանքով հիշեց «Յառաջ»-ի հիմնադիր խմբագրին՝ ներկայիս խմբագրի հայր Շավարշ Միսակյանին, նրա կատարած մեծ դերը գաղութում՝ սկզբնավորման առաջին իսկ օրից հայ ինքնության ու լեզվի պահպանման գործում:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԻՑ ՄԻ ՀԱՏՎԱԾ՝ ԽՈՍՎԱԾ ՓԱՐԻԶԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԱՆԱԿ

*Փառք և գոհություն քեզ, Հայր Երկնավոր, որ այսօր շնորհք ըրիր, որ ես Պատարագ մատուցեմ հոգևոր արժեքներով խոսուն այս եկեղեցու կամարներուն ներքև, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց: Անդրանիկ այս պատարագին, ձեր բոլորիդ՝ ողջ Ֆրանսահայությանը համար ամբողջ Ֆրանսայի տարածքի, իբրև աղոթքներուս վրա ճենճերող խունկ, այս սուրբ խորանին վրա սիրտս կդնեմ և կհայցեմ Աստուծմե, բոլորիդ պարգևե հոգևոր երջանկության և ազգային ինքնության առողջ գիտակցության բարիքը:*

*Այսօր ծունկի կուգամ հոգիիս մեջ առաջի Աստուծո և կըսեմ. ով Տեր, փառք Քեզի, որ ինձ ծառա ըրիր այսպիսի ժողովրդի, որ գիտե դարեր, դարեր տոկալ, իր հավատքին առողջ ըմբռնումով իր կյանքը ապրիլ և իր ինքնորեն դիմագծությունը աշխարհի բոլոր ազգերուն մեջ կարտահայտե արժանապատվության գիտակցությամբ և առ Աստված հավատարմությամբ:*

*«Ես եմ հացն կենաց», «Ես եմ կյանքի հացը, ան, որ ինձի կուգա, չի անոթենա»: Խոհուն բառեր են այս բառերը: Հարցրեք հավատացյալ քույրեր և եղբայրներ՝ ի՞նչ կըլլա մարդը առանց հացի: Հացը կենսական է: Մեր գոյությունը նյութական՝ հացով է պայմանավորվում: Ես շատ հաճախ եմ կարդացել մեր Հայոց պատմության այն էջերը, երբ սովն է տիրել Հայաստանի մեջ, և ինչպես արաբական արշավանքներու ժամանակ Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչը կվկայե, մարդիկ, երբ անոթության ճանկերեն էին բռնված, կոշիկի կաշին կուտեին որպես հաց: Այսքան կենսական է հացը մարդու գոյության համար: Հաց ֆիզիկական՝ ցորենեն, ալյուրեն եղած: Բայց եթե երբեք այս հացը ըլլա միակ հացը, այն ատեն Հիսուսի խոսքը կուգա մեզի տալու գիտակցությունը որ,* «մարդ ոչ միայն հացիւ կեցցէ»՝ *մարդ միայն հացով չապրվիր: Ուրիշ հաց մը կա. այդ հացը մտքի հացն է, գիտության, իմացության հացն է, այդ հացին փուռը Եկեղեցին է, դպրոցը, համալսարանը, մատենադարանը, գիտական աշխատանոցն է: Առանց մտքի հացի մենք չենք կրնար ըմբռնել գոյության, ստեղծագործության իմաստը: Գիտության հացը, մտքի իմացության հացն է: Եվ այս իմաստով է, որ մեր հինգերորդ դարու սքանչելագիր հեղինակներեն Եղիշեն՝ «Վարդանանց» պատմության հեղինակը կ'ըսե. «Ավելի լավ է լինել կույր աչքով, քան կույր մտքով»: Մտքի կուրությունը ահավոր է: Եթե երբեք ֆիզիկական աչքը թույլ է, գավազանով ճամփադ կրնաս գտնել: Մարդիկը, փառք Աստծո, հազար ու մեկ հնարներ գտած են, որ կուրությունը տառապանքի չվերածվի: Բայց եթե երբեք մեկուն միտքը թույլ է, տգետ, չի գիտեր, թե աշխարհը ինչ է և կյանքն ինչու է խարխափող, խավարի մեջ դատապարտված մեկն է: Դա երկրորդ տեսակի հացն է: Այն, որ մեր կյանքը, մեր ապրելով կարժևորե մեզի համար:*

*Ի՞նչ հետաքրքիր երևույթ է, որ ամենեն մեծ գիտնականներ, ամենախոր գիտությամբ մարդիկ ամենեն մեծ հավատացյալներն են Աստուծո: Ինչու՞: Որովհետև Տիեզերքը որպես ֆիզիկական գոյություն*

հասկնալեն և բացատրելեն ետքը, տիեզերքի աստղերուն, շարժումներուն, գոյացության, լույսի, երկրի իրականության ճշմարտությունները մնացյալ մարդերեն ավելի խոր հասկնալեն ետքը հարց կուտան՝ ուստի՞ և ինչու՞: Այսպես է, որ այս ամենը կկապվին Տիեզերքի ստեղծագործողին, որ կյանքի մեջ իմաստ դրած է, մեր ապրումի մեջ նպատակ դրած է, երջանկության ստեղծումը Երկնքի Թագավորության, Աստուծո Թագավորության՝ մեր կյանքի մեջ փոխադրումն ու իրագործումը: Խոնարհության, բարության, փոխադարձ հարաբերությանց մեջ սիրալիր վերաբերմունքի, ազնիվ վերաբերմունքի ճառագայթներով: Երբ Հիսուս ծնավ, մինչ այդ երկնքեն հրեշտակները «Փառք ի Բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» կերգեին: Կյանքին գեղեցկագույն պատկերն է, որ Հիսուս բերավ երկիր և անոր համար է, որ ըսավ. «Ես եմ Հացն կենաց»:

Եղբայրներ և քույրեր, բացեք ձեր իսկ պատմության էջերը և այդ էջերուն մեջ փնտրեցեք այդ հացը: Եվ, եթե մեր պատմության էջերը խորունկ ձևով ուսումնասիրեք, պիտի տեսնեք որ մեր հայ ժողովրդի զավակներուն դարեր շարունակ ա՛յդ Հացն է սնել և պահպանել:

Անապատին մեջ Դեր-Զորի ոչ թե թուրքի յաթաղանեն միայն, այլ կարոտութենեն մեռան շատ-շատերը, հացի կարոտեն: Բայց Աստծո տնօրենության համաձայն հայ ժողովուրդը իր ձեռքով, իր ճակտի քրտինքով իր հացը շահել կրցավ և վերստին իր ֆիզիկական գոյությունը վերապրեցավ: Բայց երբ որ այդ էջերուն նայինք, այս նյութական հացին դիմաց պիտի տեսնենք հոգեկան հացին առատություն: Մտե՛ք Հայոց Մատենադարան Երևանում: Ի՞նչ են այդ ձեռագրերը, եթե ոչ հոգևոր հացի աղբյուրներ: Ման եկեք Հայաստանի մեջ, շրջագայեցեք բլուրները, ձորերը, Հայոց տաճարները, հոգեկան կյանքի վկայախոս այն հուշարձանները, որոնցմե հավատքի հացն է, որ ձեզի կուգա:

Այսօր, աշխարհիս մեջ նյութեղեն հացը առատացած է բազում երկրներու մեջ, բայց աշխարհիս մեջ 15 միլիոն մարդ կմեռնի հացի պակասեն ուրիշ երկրներում: Բայց այդ նյութական հացի առատության դիմաց սկսած է աղքատանալ մարդկությունը, ընկերությունը, հոգևոր հացից: Եվ մենք, իբրև հայ ժողովրդի զավակներ, այսօր պետք ունինք այդ հացին վերստին ավելացմանը մեր ընտանեկան, մեր հասարակական, մեր անհատական և ազգային կյանքին մեջ:

Այսօր, մենք իբրև հայ ժողովուրդ, երբ Փառք Աստուծո, վերագտանք այդ հոգևոր հացին ներգործությունը մեր աշխարհին մեջ, քրիստոնեական հավատքի վերազարթոնքը, մեր Հայաստան աշխարհի ազատությունը և անկախությունը՝ ուրեմն գիտնանք այդ հացին փրկարար արժեքը:

Եկեք դառնանք դեպի հոգևոր հացը Ավետարանի, քրիստոնեական հավատքի և մեր հայրերու սուրբ ավանդության մեջեն: Եթե երբեք դուք գիտնաք, թե ինչ գանձեր կան մեր եկեղեցական շարականներուն մեջ ամփոփված, թե ինչ խորը հոգեկան ապրումներ և, եթե դրանք մեր կյանքին մեջ թափանցեն, հավատացեք, մենք ուրիշ մարդ կդառնանք, վավերականորեն, ճշմարտորեն, և ոչ թե անհատականորեն, հիշողականորեն, մեր անցյալովը միայն հպարտացող և ներկայովը չվկայող մեր կենդանության մասին:

Մեկ տող մը այսօր, կուզեմ ձեզի, իբրև խորտիկ այս սուրբ խորանեն մատուցանել—

ԱՌՆՈՒՎԻԼԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻՆ

ՂԱՏԱՎԱՆԱՅՏԱՅՈՒ ՎՈՒՅԱԳՔ ՑՈՂԱՍԷ ՈՒՍՈՂՇՈՂՈԷ ԱՎԱԳԻՈՂՈՉԱՍԷ



Երգեցինք այս եկեղեցիին մեջ Ծնունդի օրը. «Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ»: Ի՜նչ հանկուցիչ պատկեր է: Համաշխարհային գրականության մեջ այսպիսի պատկեր չեք տեսնի՝ Ան, որ Տիեզերքը չէր կրնար բովանդակել՝ Անբավելին երկնի և երկրի, Ինքն էր ստեղծիչը, խանձարուրի մեջ պատվեց: Անհունության և սահմանավորության հակադրությունն է: Ի՞նչն էր պատճառը, որ Անհունը հունավոր կը դառնա: Սե՛րը: Սերը, որ Աստված մարդ ըրավ, սերը, որ երկինքը երկրին միացուց և այդ հզոր ուժը ստեղծեց մարդկության կյանքին համար: Բայց քանի՞ հոգի մեր ժողովրդեն կաղոթեն ա՛յս հասկացողությամբ և ոգով: Պետք ունինք մեր ժողովուրդը վերադարձնելու մեր այս հոգեկան հացի աղբյուրներուն և պետք է մենք՝ հոգևորականներս, գործենք որպես նախանձախնդիր մատուցողը այս հացի: Ապրե՛նք այս գիտակցությամբ ու նվիրումով և Աստուծո հացը լինի մեր սնունդը հանապազօրյա, հավիտյանս հավիտենից. ամեն:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌՆՈՒՎԻԼ ԼԵ ԿՈՆԵՍ

Հունվարի 27-ին, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբի ուղեկցությամբ, հայրապետական հերթական այցով, մեկնեց Առնուվիլ՝ հանդիպելու տեղի հավատավոր հայորդյաց հետ, կրուցելու, մոտիկից ծանոթանալու, ինչպես նաև նրանց փոխանցելու իր հայրապետական պատգամն ու հայրական օրհնությունը:

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՆՈՒՎԻԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Այստեղ Վեհափառ Հայրապետին հանդիսավորապես դիմավորելուց հետո, ժողովրդական թափորով Հայոց Հայրապետն առաջնորդվեց քաղաքապետարան, ուր Նորին Սրբությանը ջերմ սիրով դիմավորեց քաղաքապետ Քլոդ Բիժելը: Ողջագուրանքի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, քաղաքապետ Քլոդ Բիժելի հետ տեղի ունեցավ կարճատև կրույց, հընթացս որի Վեհափառ Հայրապետն ասաց. «Մեր օրերին, երբ աշխարհը բաղում տագնապներ է ապրում, և մարդկությունը որոնում է ճանապարհը մի խաղաղ նավահանգստի, այս լուսառատ երկրում, բաղում հոյակերտ տաճարների կողքին հավաքված հայությունը տանում է իրեն բաժին ընկած խաչը: Դուք աջակցում եք իմ ժողովրդին, որի համար ես, որպես ավագ սպասավորն այդ ժողովուրդի և հոգևոր հայրը, շնորհակալություն եմ հայտնում»: Հավարտ կարճատև ընդունելության, շքախումբը, Նորին Սրբության նախագահությամբ, առաջնորդվեց դեպի Վարագա Ս. Խաչ հայկական եկեղեցի:

## ԱՌՆՈՒՎԻԼԻ ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Եկեղեցին և ամբողջ բակը լիքն էր հավատավոր հայորդիներով, որ եկել էին իրենց հարգանքի ու խոնարհության տուրքը մատուցելու Ամենայն Հայոց այնքան սիրելի Հայրիկին, մոտիկից տեսնելու, ունկնդրելու նրա խոսքը, ստանալու հայրական

օրհնանքը: Առնուվիլի հայ բնակչությունը, հոգևոր հովիվ Մեսրոպ ավ. քհն. Ժամկոչյանի գլխավորությամբ, մեծ խանդավառությամբ ու ծափողջույններով դիմավորեց իր Հայրապետին:

Վեհափառ Հայրը «Հրաշափառով» մուտք գործեց եկեղեցի և թափորով առաջնորդվեց դեպի Ավագ Խորան: Կանոնական աղոթք առաքելով առ Բարձրյալը, Հայոց Հայրապետը փառք տվեց Տիրոջը՝ նման առիթ իրեն ընձեռելու համար: Ապա, դառնալով դեպի ներկաները, Նորին Սրբությունն իր հայրապետական պատգամը հղեց ամենքին՝ Պողոս առաքյալի խոսքով՝ «Հսկեցէ՛ք, հաստատուն կացէք ի հաւատս, կօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» և ի մասնավորի շեշտեց. «Կյանքում մենք շատ բան կարող ենք կարևորել: Բայց իմ կարծիքով կարևորագույնն այն է, թե ինչպես ենք մենք օգտագործում ժամանակը մեր կյանքի ընթացքին, ինչ գործեր ենք կատարում: Այս հարցին մենք պետք է պատասխան տանք մեր խղճի առջև»:

Վեհափառ Տերն իր խոսքը եզրափակեց ասելով. «Մենք հայ ազգի մաս կկազմենք և մեր Եկեղեցին սիրտն է մեր ազգին: Ապրենք ու գործենք այդ գիտակցությամբ»:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՆԵՍ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՐԱՆՈՑ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ

Եկեղեցուց Վեհափառ Հայրապետը մեկնեց Կոնեսի հայկական ծերանոց: Հուզիչ ու արտառուչ էր հանդիպումը ծերանոցում, ուր Հայոց Հայրապետին դիմավորեցին հաստատության հոգաբարձությունը՝ գլխավորությամբ նախագահներ Ռաուլ Գալանճյանի և Անդրե Եդիգարտակյանի, և քաղաքապետարանի ներկայացուցիչները: Ծերանոցաբնակները հոգեկան մեծ ցնծությամբ ընդունեցին Նորին Սրբությանը: Բարիգալստյան և ողջույնի խոսքերի փոխանակումից հետո, նրանք Վեհափառ Հորը ներկայացրին իրենց ուժերով պատրաստած գեղարվեստական փոքրիկ հայտագիրը:

Այնուհետև իր օրհնությունը նրանց բաշխեց Վեհափառ Տերը, հորդորեց գոտեպնդվել, ամրացնել հավատքը, հոգ տանել իրենց հոգեկան և ֆիզիկական առողջության մասին և ուրախ լինել, որ իրենց առաջացած տարիքում կարողացան տեսնել իրենց պաշտելի և տառապած ազգի վերածնունդը հայրենիքով և արտասահմանի հայությամբ:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԸ ՌԵՆԻՍԻ ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Հրաժեշտ տալով համայնքի տարեցներին, Գարեգին Ա Վեհափառն ուղղվեց Դպրոցասեր Տիկնանց վարժարան, ուր ևս ամենայն մանկանց շատ սիրելի Պապիկին դիմավորեցին ծափողջույններով և ավանդական աղ ու հացով: Ողջունելով փոքրիկներին, մի պահ Հայոց Հայրապետը ևս, ասես, մանկացավ՝ նրանց անմեղ աչուկներում տեսնելով քրիստոսավանդ սիրո առկայծումը, անմեղության խորախորհուրդ դրսևորումը և այն

մաքրամաքուրը, որ միայն մանուկ հոգին կարող է պարագրել իր սահմաններում: Մանուկների անմեղ շուրթերից հնչած «Հայոց Պապիկը» խոսքերը ցնծությամբ լցրեցին Վեհափառ Հոր սիրտը, ջերմացրին անմեկնելի սիրով ու ոգևորությամբ: Վարժարանի ընդարձակ դահլիճում Վեհափառին բարիգալստյան խոսք ասացին խնամակալության ատենապետուհի տիկին Ժանին Վարդանյանը, Ռենսիի քաղաքապետ և պետական նախարար Էրիք Ռաուլթը, օր. Շաքե Դեյրմենջյանը: Ապա իրենց ուրախ երգ ու պարով, ծափ ու ծիծաղով լցրեցին դահլիճը փոքրիկ ասները: Բանաստեղծական խոսքերը հնչում էին մայրենի լեզվով, ասես այս կերպ առավել շեշտելով այն հանգամանքը, որ իրենք թեև հեռու են հայրենի հողից, սակայն իրենց մեջ միշտ ողջ է հայի ոգին և իրենց արյան կանչով են իրենք նվաճելու ապագան:

Վերջում իր հայրապետական օրհնություններն ու պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը, ցանկացավ, որ ամեն մի մանուկ, մեծանալով, դառնա մեր վաղվա քաջ Վարդանը, Սուրբ Մեսրոպը, Նարեկացին, որպեսզի այս կերպ առավել արժևորվեն Հայոց Երկիրն ու այդ երկրի արևաշող գալիքը:

## ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ՀՈՒՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը Նորին Սրբությունը հյուրը եղավ Հունաց Տիեզերական Պատրիարքության Եվրոպայի ներկայացուցիչ և Ֆրանսիայի առաջնորդ միտրոպոլիտ Ժերեմիի: Ապա ներկա գտնվեց և նախագահեց Հույն Ուղղափառ եկեղեցում կատարվող էկումենիկ հատուկ աղոթքին, որին մասնակցում էին բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Հավարտ արարողության, միտրոպոլիտ Ժերեմին գրավոր մի գեղեցիկ ուղերձով բարիգալստյան խոսք ուղղեց Նորին Սրբությանը: Ապա Վեհափառ Հայրապետը ֆրանսերեն լեզվով քարոզ խոսեց և գնահատեց երկար տարիների երկխոսությունը երկու Եկեղեցիների միջև: Այնուհետև հունաց առաջնորդին նվիրեց բյուրեղապակյա մի ծաղկաման՝ ի նշան երկու Եկեղեցիների եղբայրության և սիրո:

Վերջում աղոթքի բոլոր մասնակիցները բարձրացան Հունաց առաջնորդարան, ուր տեղի ունեցավ խորհրդակցություն՝ ի նպաստ Եկեղեցիների միջև առկա փոխհարաբերությունների ավելի սերտացման ու ամրապնդման:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Այստեղից Նորին Սրբությունը մեկնեց Ֆրանսիայի Բողոքական Եկեղեցիների միության կենտրոն և հյուրընկալվեց Բողոքական Եկեղեցիների Ֆեդերացիայի նախագահ վերապատվելի Ժակ Ստյուարտի և նրա պաշտոնակիցների կողմից: Այստեղ Ժակ Ստյուարտը, որը անձնական բարեկամ է Վեհափառ Հայրապետի, ջերմ խոսքերով ողջունեց Նորին Սրբության այցելությունը:

Վեհափառ. Հայրապետը իր պատասխան խոսքում հիշեց, որ տարիներ առաջ, երբ ինքը ուսանող վարդապետ էր Եվրոպայում, այցելել էր այս տունը և անկեղծ եղբայրական վերաբերմունք ու ջերմություն էր վայելել:

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ LCI ՀԵՌԱԽՈՍԱԾՐԱԳՐՈՎ

Երեկոյան, հյուրանոցում, Վեհափառ Հայրապետը հանդիպեց տեղական ռադիոյի թղթակիցների հետ և հանգամանալից հարցազրույց տվեց իր· այցելությունների, հանդիպումների և տպավորությունների մասին:

Ավելի ուշ, LCI հեռուստածրագրով, Վեհափառ Հայրապետը տվեց ևս մեկ հարցազրույց, շուրջ մեկ ժամ տևողությամբ, որը սփռվեց ողջ Ֆրանսիայում և հարևան երկրներում:

Վեհափառ Հորն ուղղված հարցերը բազմաբնույթ էին: Հարցերից մեկը վերաբերվում էր Հայաստանի վերանկախացյալ Հանրապետությանը, նրա տնտեսական ու քաղաքական կացությանը, ժողովրդի վիճակին: Այնուհետև շոշափվեց լայն արձագանք գտած Ղարաբաղյան հիմնախնդիրը, որ շարժել է ողջ աշխարհի ուշադրությունը:

Նորին Սրբությունը ֆրանսերենով հանգամանալից և մանրամասնորեն պատասխանեց տրված բոլոր հարցերին: Հայոց Հայրապետի համոզիչ և հանգամանալի պատասխանները մեծ կարմանք ու հիացմունք պատճառեցին ոչ միայն հարցազրույցը վարող լրագրողներին, այլև բոլոր ունկնդիրներին:

## ԺԱՄԱՆՈՒՄ ՆԻՍ

Հունվարի 28-ին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով ժամանեց Նիս, ուր դիմավորվեց մեծ շուքով:

Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Նիսի հոգևոր հովիվ Նարեկ եպս. Շաքարյանը, Կաթողիկե Եկեղեցու ներկայացուցիչ Սեն Մաքառի եպիսկոպոսը, Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ Քենեթ Նեթը, Հունաց Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչ հայր Միշել Սենինոթաքիսը, քաղաքապետ Ժակ Պեռան, շրջանային փոխնախագահ Քրիստի Էքստոուլին, վարչության պետ Դո Ֆյուռտը, Նիսի հոգևոր հովիվ Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, ազգային գործիչներ, ինչպես նաև հավատավոր ֆրանսահայեր:

Օդանավակայանից մեքենաների շարասյունն ուղևորվեց դեպի Նիսի Ս. Աստվածածին եկեղեցի, ուր հավաքվել էր քաղաքի ողջ հայ բնակչությունը: Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին ծափողջույններով և ավանդական աղ ու հացով:

«Հրաշափառ»-ով և թափորի ուղեկցությամբ մուտք գործելով եկեղեցի, Գարեգին Ա Վեհափառն Ավագ խորանի առջև կանոնական աղոթքով իր գոհությունը հայտնեց Ամենակարող Աստծուն այդ պահի համար, ապա, դառնալով դեպի ներկաները, իր հայրապետական պատգամը տվեց նրանց՝ կոչ անելով ապրել

հայ ներկա կյանքի կշռույթով, ստեղծագործել նոր ոգով, սերտորեն կապվել Մայր Հայրենիքին և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Իր խոսքում Վեհափառն անդրադարձավ Ս. Էջմիածնին, անվանելով այն հայոց Բեթղեհեմ և հայ հոգու ծննդավայր, շեշտեց նրա պատմական դերը և ամենքի ուշադրությունը բևեռեց ներկայի վրա, ինչը հայության գլխավոր դարձակետը նկատեց և հավատեց, որ հայ ժողովուրդը հրաշալի ապագա ունի: Հենց Հայոց Բեթղեհեմում՝ Ս. Էջմիածնում է ծնվել հայկական անկոտրում ոգին: Հայոց Հայրապետը կարևորեց նաև հոգևորականի համար ժողովրդի հետ շփումներ ունենալու հրամայականը:

Ապա ֆրանսերենով շարունակելով խոսքը, Նորին Սրբությունն անդրադարձավ Հռոմի Կաթողիկե Եկեղեցու Պետ Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ ունեցած հանդիպմանը, ուրախություն հայտնեց, որ այդ առիթով դրվեց շատ կարևոր մի երկխոսության հիմքը:

Պատասխան ուղերձով Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմեցին նաև մոնսինյոր Սեն Մակարին և Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչը՝ Նորին Սրբության ներկայությունը Ֆրանսիայում գնահատելով որպես Աստվածառաք սիրո և Եկեղեցիների համերբայրության լավագույն վկայություն:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԻՍԻ «ՊԱՐԱՄՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ

Տաճարից Նորին Սրբությունն առաջնորդվեց դեպի «Պարամյան» վարժարան, որի շենքը վերջերս էր կառուցվել:

Այստեղ Վեհափառ Հորը ջերմորեն դիմավորեցին տնօրենուհի Սիդա Դանիելյանը, ուսուցչական կազմը և աշակերտությունը:

Շրջելով վարժարանի հարմարավետ ու կոկիկ սենյակներում, Վեհափառ Հայրապետը ծանոթացավ աշխատակազմի հետ, ինչպես նաև դասավանդման մեթոդներին ու դասավանդվող առարկաներին: Զրուցեց երեխաների հետ, կիսեց նրանց մտքերը, հորդորեց ամուր մնալ նախնյաց հավատքի ու նարեկյան ավանդների ակունքներին, արժանի և հավատարիմ թոռնիկները լինել քաջն Վարդանի և Ս. Մեսրոպի:

Այնուհետև Գարեգին Ա Վեհափառն օրհնեց կրթօջախը, որից հետո աշակերտությունը ներկայացրեց հատուկ այդ օրվա համար պատրաստած գրական-գեղարվեստական գեղեցիկ հայտագիրը:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետն իր հայրապետական պատգամն ու հայրական օրհնությունը բաշխեց ամենքին, ապա համատեղ աղոթեցին «Պարամյան» վարժարանի հիմնադրի հոգու խաղաղության համար:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ ՆԵԿՐԵՍԿՈ ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

«Պարամյան» Վարժարանից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի Նեկրեսկո պանդոկ, որի գեղեցիկ սրահում, ի պատիվ Նորին Սրբության,

տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հոգևոր այրեր, ինչպես նաև հայ համայնքի անդամներ:

Հայոց համայնքի անունից բարիգալստյան ուղերձն ընթերցեց եկեղեցու վարչության ատենապետ տիար Գրիգոր Աժդերխանյանը:

Այնուհետև ներկաներին իր հայրապետական պատգամները տվեց Նորին Սուրբ Օծությունը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Պաշտոնական ճաշից հետո Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Նիսի Ս. Աստվածածին եկեղեցու վարչության անդամների հետ, ծանոթացավ նրանց աշխատակարգին, տեղեկացավ վարչական դրությանը, ինչպես նաև մի շարք այլ հարցերի:

Նորին Սրբությունը օգնեց նրանց նաև իր հայրական խորհուրդներով:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նույն օրը եկեղեցում Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաև քաղաքի հայ երիտասարդությանը և անկեղծ կրույց ունեցավ նրանց հետ: Նորին Սրբությունը, հայրական խրատներ տալով երիտասարդներին, հորդորեց, որ վերջիններս, իրենց ջանքերի շնորհիվ, ամուր և մշտանորոգ պահեն Սփյուռք-Հայաստան կամուրջը: Ապա կոչ արեց լինել ուսումնատենչ, սիրել գիրն ու գրականությունը, իրենց նորաբողբոջ ուժն ու գիտելիքները ծառայեցնել ի նպաստ վերանորոգվող Մայր Եկեղեցու և նորանկախացյալ Հայրենիքի ծաղկման ու բարգավաճման, շեշտեց նրանց մեծ պատասխանատվությունը ապագայի հանդեպ:

Վերջում Վեհափառ Տերը պատասխանեց երիտասարդներին հուզող հարցերին:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հետկեսօրին տեղական լրագրողների կողմից կազմակերպվեց ճեպազրույց Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հետ, հընթացս որի Նորին Սրբությունը պատասխանեց հայ և օտար լրագրողների հարցերին:

Հայոց Հայրապետը լրագրողներին հայտնեց նաև, որ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ իր հանդիպման ժամանակ անդրադառնալու է երեք հարցի. նախ պատրաստվում է իր գոհունակությունը հայտնել ֆրանսահայ գաղութի բարօր կյանքի առիթով, նաև, որ Ֆրանսիան ընդլայնի Հայաստանի հետ իր մշակութային կապերը և, ի վերջո, պետք է խոսի Ղարաբաղյան խնդրի մասին, քանի որ Ֆրանսիան ընտրվելու է Մինսկի խմբի համանախագահ: Շարունակելով իր խոսքը, Գարեգին Ա

*Կաթողիկոսը մասնավորաբար ասաց.* «Ֆրանսան այն եվրոպական երկիրներեն է, որ շատ լավ կճանչնա Հայաստանը: Մեր երկիրներուն միջև գոյություն ունի երկար համագործակցության ավանդույթ մը: Ինչպես Եվրոպայի ապահովության մեջ, այնպես ալ Լեռնային Ղարաբաղի հարցին գծով Ֆրանսան կարևոր դեր կրնա խաղալ քաղաքական գետնի վրա»:

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԵԼՈՒՅԹԸ «ՖՐԱՆՍ 3» ՀԵՌՈՒՍՏԱԿԱՅԱՆՈՎ

*Լրագրողների հետ ունեցած մամլո ասուլիսից հետո, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի Անթիպ, ուր գտնվում է «Ֆրանս 3» հեռուստակայանը՝ մասնակցելու ուղիղ եթեր հեռարձակվող հաղորդմանը, որ նվիրված էր Նորին Սրբության շնորհաբեր այցելությանը:*

*Հընթացս հաղորդման նախ ներկայացվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ժամանումը, մուտքը Ս. Աստվածածին եկեղեցի, հանդիսավոր թափորը...:*

*Ապա տեղի ունեցավ ճեպակրույց Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Վեհափառ Տերը հակիրճ ու դյուրըմբռնելի պատասխանեց իրեն առաջադրված բոլոր հարցերին, մանրամասնեց իր այցելության նպատակը:*

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ «ՊԱՐՍԱՄՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍՐԱՀՈՒՄ

*Երեկոյան, «Պարսամյան» վարժարանի հանդիսասրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվեց պաշտոնական շքեղ ընթրիք, որին ներկա էին քաղաքապետ Ժակ Պեռան, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, շրջանային վարչության պետ Դո Ֆյուռտը, Կաթողիկե Եկեղեցու ներկայացուցիչ Սեն Մաքարին, Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ հայր Միշել Սենիոթաքիսը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, հոգևոր այրեր և ազգայիններ: Ներկա էին «Պարսամյան» վարժարանի բարերար Պարսամյան ընտանիքի անդամներ տիկ. Լյուսի Պարսամյանը, Վիրժինիա, Պավել և Իպաբել Իշխանյանները, որոնք ժամանել էին Լոնդոնից՝ ողջունելու Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը:*

*Իրենց ողջույնի ու բարիգալստյան խոսքերում Նիսի քաղաքապետն ու քաղաքապետարանի մյուս պաշտոնյաները գոհունակություն հայտնեցին Հայոց Հոգևոր Պետին՝ Նիս այցելելու համար: Նորին Սրբության ներկայությունը մեծ պատիվ է իրենց համար, նշեցին ելույթ ունեցողները:*

*Բարիգալստյան ջերմ խոսք ասաց նաև Նիսի եկեղեցական վարչության ատենապետ դր. Գրիգոր Աժտերիանյանը: Վերջում Հայոց Հայրապետն իր հայրական պատգամով դիմեց երեք հարյուրից ավելի ներկաներին՝ հորդորելով վեր մնալ ամեն տեսակի մանր հաշիվներից, թույլ չտալ, որ դրանք խափանեն համայնքի անդորրը, այլ ապրել արժանապատիվ կերպով: Նա բարձրորեն գնահատեց Պարսամյան ընտանիքի բարերարության ոգին և օրհնեց Պարսամյան ընտանիքը:*

Իր խոսքի վերջում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց քաղաքային և համայնքային իշխանություններին՝ այդքան ջերմ ու արտառուչ ընդունելության համար:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՆԹ ՌԱՖԱՅԵԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՐՆԱՆՈՑ ՀԱՆԳՍՏԻ ՏՈՒՆ

Հունվարի 29-ին Վեհափառ Հայրապետն իրեն ուղեկցողների առաջնորդությամբ Նիսից մեկնեց Սենթ Ռաֆայել:

Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին Վառի նահանգապետ պրն. Մարքիանին և քաղաքապետ պրն. Ժինեսթան, Հայ Աղքատախնամ ընկերության վարիչները: Ավանդական աղն ու հացը օրհնելուց հետո, Վեհափառ Տերը եղավ տեղի Ս. Հովհաննես մատուռում: Փոքրիկ աղոթքից հետո Նորին Սրբությունն առաջնորդվեց դեպի Ծերանոցի շենք և ջերմ կրույց ունեցավ բնակիչների հետ:

Նախ բարիգալստյան խոսք ասաց տիկ. Ատել Կարապետյանը՝ բոլորի կողմից ուրախություն հայտնելով այս օրհնաբեր այցելության համար: Ապա արտի խոսք ասացին նաև մյուսները, իսկ քաղաքապետ Ժ. Ժինեստան, շեշտելով, որ Հայոց Հայրապետի այցելությունը Սենթ Ռաֆայելի համար պատմական նշանակություն ունի, Նորին Սրբությանը հանձնեց քաղաքի պատվո շքանշանը:

Այնուհետև ամենքին իր հայրական օրհնանքը բաշխեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, հորդորեց լինել քաջ ու տոկուն, ամուր պահել պապերից ժառանգած հավատքը և հենց այդ հավատքով էլ ապրել կյանքը՝ ի շահ Հայ Եկեղեցու և ի բարօրություն ապգին հայոց:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԱ ՍԻՈԹԱՅԻ Ս. ՓՐԿԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ապա Նորին Սրբությունը Սենթ Ռաֆայելի ծերանոցից մեկնեց Լա Սիոթայի Ս. Փրկիչ հայկական եկեղեցի, ուր ճիշտ ժամը 13.00-ին դիմավորվեց տեղի հավատավոր ժողովրդի կողմից՝ հոգևոր հովիվ Մակար քին. Նաջարյանի գլխավորությամբ:

Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, Վեհափառ Տերը «Հրաշափառ»-ով մուտք գործեց տաճար: Տ. Մակար քին. Նաջարյանի բարիգալստյան խոսքից հետո, Նորին Սրբությունը ներկա հավատացյալներին դիմեց հակիրճ խոսքով: Ողջունելով ամենքին, Վեհափառ Հայրապետը ի մասնավորի նշեց. «20-րդ դարն սկսեցինք արյունով և մահով, բայց վերջացնում ենք անկախ, ապատ հայրենիքով: Պետությունը և Եկեղեցին միասին պետք է քայլեն և դիմագրավեն Հայաստանի առջև դրված մարտահրավերները: Իսկ Էջմիածինը հավաքական ապրումների ուխտատեղի է, ուժ է և ոչ լոկ կբոսաշրջիկության վայր»:

Իր խոսքը շարունակելով ֆրանսերենով, Հայոց Հայրապետը ամենքին մաղթեց հաջողություն և արևշատություն:

Ապա Նորին Սրբությունն ուղղվեց դեպի Մարսել:

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՐՍԵԼՈՒՄ

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՍԵԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

*Հունվարի 29-ին, տեղական ժամանակով ճիշտ ժամը 17.00-ին, Մարսելի Սրբոց Թարգմանչաց հայոց եկեղեցու կանգերն ավետեցին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ժամանումը: Նորին Սրբությանն ընկերանում էին Գյուտ արք. Նագգաշյանը և Հարավային Ֆրանսիայի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Տարոն եպս. Ճերեճյանը:*

*Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, Վեհափառ Տերը, հանդիսավոր թափորի ուղեկցությամբ, «Հրաշափառի» երգեցողությամբ մուտք գործեց Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցի:*

*Կանոնական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելությունը ողջունեց տեղի հոգևոր հովիվ Զատիկ վրդ. Ավետիքյանը:*

*Հոգեշնորհ հոր բարիգալստյան մաղթանքներից հետո, դիմելով ներկաներին, Վեհափառ Հայրապետն ասաց. «Գերերջանիկ պահ մը կապրիմ, աղոթակից դառնալով ձեզի հետ և միասնաբար նայելով Աստուծո հայելիին մեջ»: Նշեց, որ հայ ժողովուրդը թևակոխել է իր գոյության բոլորովին նոր շրջանը և ապա ավելացրեց, որ իր այցելությամբ ֆրանսահայությանն է բերել հայրենիքի նորօրյա շունչն ու ոգին. «Եկել եմ որպես հոգեգործ, որպեսզի հոգիները մշակեմ, բերել եմ Լուսավորչի հավատքը: 70 տարի փորձեցին մեկ լոել տալ, բայց քարերը խոսեցին: Հավատքը ներթափանցել է մեր մեջ և ոչ ոք չկարողացավ արմատախիլ անել այն, ժայռերի հանդիպեցին»: Վեհափառ Հայրապետը նշեց նաև, որ 70 տարիները չկարողացան ճնշել մեր ազգային ինքնության գիտակցությունը. «Եվ, երբ պայմանները փոխվեցան, արևը ծագեց և երկաթե վարագույրը դարձավ ապակյա: Պատիվ անոնց, որ դիմադրեցին և տոկացին: Այժմ կու գամ այն երկրեն, որ ձեր հայրերը երապեցին և այդ երապով իրենց աչքերը փակեցին այս աշխարհում»: Նորին Սրբության հայրապետական պատգամի առանցքն էր Հայաստանն ու Սփյուռքը, թե հարկավոր է օգնել Հայաստանին, «համախմբվիլ եկեղեցական հայկական կառույցներու շուրջ և կառչած մնալ մեր արմատներուն»:*

*Ապա Գարեգին Ա Կաթողիկոսը ֆրանսերենով իր սրտի խոսքն ասաց քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին: «Ձեր ներկայությունը հարստություն մըն է մեկի համար,- ասաց Նորին Սրբությունը,-ձեզ հետ կբերեք քրիստոնեական հավատքի ոգին և ընդհանրականությունը»:*

*Վերադառնալով հայերենին ու հարապատ ժողովրդին, Նորին Սրբությունն առաջադրեց «Ո՞վ ենք մենք այսօր» հարցադրումը, վերհիշեց 1920-ական թվականների Մարսելն իր գաղթականներով, անտեր, ինքնության մեջ անորոշ, տարտամ գոյավիճակով, որ սակայն աշխատանքով գաղթականի ցուպը նետեցին և*

դարձան, ինչպես նաև հաջորդող սերունդներին դարձրին այդ երկրի պատվաբեր քաղաքացիները:

Վերհիշեց նաև 1918-ի գեղեցիկ իրագործումը՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը, որ ծնվեց որբության, տառապանքի ու պայքարի մեջ: Վերհիշեց 70 տարիների բռնատիրական վարչակարգը, ահավոր իրավիճակը և շարունակեց. «սակայն ինքնության գիտակցությանը կառչած մնաց ժողովուրդը: Արտաքին ճնշումը չկրցավ խաթարել ապատ ըլլալու տենչը: Երբ պայմանները փոխվեցան, արևը ծագեցավ, և երկաթե վարագույրը դարձավ ապակյա: Եվ պատիվ անոնց, որ դիմադրեցին և տոկացին: Կու գամ այն երկրեն, կոր ձեր հայրերը երապեցին»:

Գարեգին Ա Կաթողիկոսն իր խոսքն ավարտեց՝ շեշտադրելով բարոյական արժեքները և միասնականությամբ գործելու գաղափարը, կոչ արեց ապրել նոր հոգեբանությամբ, կորացնել վերանկախացյալ Հայրենիքը, որի միակ և բնական դաշնակիցը Սփյուռքն է:

Ապա տեղի ունեցավ աջահամբույր, որից հետո Նորին Սրբությունը թափորով առաջնորդվեց դեպի եկեղեցու բակում գտնվող Նահատակաց Հուշարձան, կետեղեց ծաղկեպսակ և կատարեց հոգեհանգստյան կարգ:

Ավելի ուշ, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, Մարսելի ազգային-եկեղեցական մարմինների կողմից տրվեց պաշտոնական ընթրիք:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»-Ի ԴՊՐՈՑ

Հաջորդ օրը, հունվարի 30-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց «Համազգային»-ի կրթարան: Նորին Սրբությունը շրջեց դպրոցի կանապան բաժիններում, ծանոթացավ ուսումնական ծրագրերին, հետաքրքրվեց, թե ինչ առարկաներ են ուսուցանվում, ապա արտալից, անկեղծ կրույց ունեցավ ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ: Տնօրինուհի Լ. Մալիքյանն իր բարիգալստյան խոսքում նշեց. «Վեհափառի կյանքի պատկերը օրինակ թող դառնա ամեն մեկ աշակերտի համար»:

Նորին Սրբությունը պատասխան խոսքում նախ դիմեց աշակերտությանը՝ ասելով. «Մեր ժողովրդի օրե օր պայծառացող արևը կտեսնեմ ձեր աչքերուն մեջ»: Ապա Վեհափառը խոսք ուղղեց ուսուցիչներին. «Ձեր անձերուն մեջեն պետք է ճառագայթի սերը, ներշնչման աղբյուրը, ոգին և ոչ միայն լոկ գիտությունը» և ավելացրեց. «Դպրոցը պետք է շենացնել: Եթե կյանքը կարգացում է, թող այն սկսի դպրոցով»:

Ամենայն Հայոց Հայրիկը հրավիրեց դպրոցի աշակերտությանը Ս. Էջմիածին, ասելով. «հրամեցեք, հոն ունիք հայրիկ մը, բայց չծերացող հայրիկ մը»:

Գարեգին Ա Կաթողիկոսը երախտագիտությամբ հիշեց Համազգայինի հիմնադիրներին, ինչպես նաև նրանց նվիրյալ առաքելությունը: Ապա կոչ արեց. «Դպրոցը պետք է շենցնել, լայնցնել, որպեսզի մեր հոգին խոսի պերճախոս կերպով: Եթե կյանքը կարգացում է, թող այն սկսի այս դպրոցով, այլ ոչ թե մեր տներով»:

Ֆրանսերենով շարունակելով խոսքը, Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց երեսփոխաններ Ռ. Պլումին և Մ. Մասին, քանի որ Մարսելի քաղաքապետարանը դպրոցին կից հողը խորհրդանշական վարձով հանձնել էր կրթարանին, և հայերենով ավելացրեց. «հողը ունենալը հանգրվան մըն է: Այն արժևորելը, կյանքի կոչելը հայու մեր պարտականությունն է: Այս դպրոցը թող ըլլա ձեր ակնիվ տուրքը»:

Եկեղեցուց հետո Համակգայինն է եղել մշակութային տուն, ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը և ապա օրհնեց այն հիմնաքարը, որ պետք է կետեղվի դպրոցի մուտքին: Վեհափառը օրհնեց նաև նոր կառուցվելիք ընդարձակ վարժարանի հողը, կոչ ուղղելով ողջ ժողովրդին, որ առատաձեռն նվիրատվություններով կառուցեն պատվաբեր այս շենքը քաղաքային իշխանությունների կողմից տրամադրված այս տարածքի վրա: Վերջում Նորին Սրբությունը հուշանվերներ հանձնեց դպրոցի տնօրինությանը:

Նորին Սրբությանը կրթարանից ճանապարհեցին մեծ շուքով և այն մեծ ակնկալությամբ, թե շատ շուտով կրկին անգամ պիտի հանդիպեն, այս անգամ արդեն ավելի մեծ ձեռքբերումներով:

## ՊՈՄՈՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այստեղից ժամը 10.40-ին Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի Համակգայինի դպրոցից ոչ շատ հեռու գտնվող Պոմոնի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Եկեղեցու հովիվ Մովսես քհն. Գալենտերյանի գլխավորությամբ հավատացյալները Նորին Սրբությանը դիմավորեցին մեծ ուրախությամբ և ցնծությամբ: Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի:

Եկեղեցում Նորին Սրբությունն իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Աստված, ապա, հոգևոր հովվի բարիգալստյան խոսքից հետո, ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Նորին Սրբությունը: Հակիրճ խոսքով նախ վերհիշելով շուրջ քառասուն տարիներ առաջ իր վարդապետ եղած ժամանակ այցելությունը այս եկեղեցի, ասաց. «հուզում մը կա իմ մեջ այս պահուն, երբ խորան բարձրացա: 1957-ի սեպտեմբերին, դեպի Անգլիա ճանփուն վրա, կանգ առի Մարսել և հոս առիթ ունեցա պատարագելու»:

Ապա Կաթողիկոսը հիմնական շեշտը դրեց պետության և Եկեղեցու փոխհարաբերության վրա՝ որպես մեկը մյուսին լրացնողներ, որպես ազգի առաջնորդներ, ընդգծեց Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ և լիապոր դեսպան Վ. Չիտեչյանի ներկայությունը և խոսքն ավարտեց, ասելով. «Հայուն համար մահ չկա, այլ մեկ բան՝ ինքնասպանություն, եթե մենք կապված չըլլանք մեր հավատքին, հայրենիքին, դպրոցներուն, մշակույթին և ազգային արժեքներուն»:

Վերջում Նորին Սրբությունն օրհնեց հանգուցյալ բարերարների հիշատակը և կոչ ուղղեց նոր բարերարներին՝ ճոխացնել հայրերից ժառանգած նվիրական գործը:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆ

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետն այցելեց Մարսելի նահանգապետարան, ուր երկուստեք փոխանակվեցին ողջույնի ջերմ խոսքեր: Նահանգապետ Պրեֆե Հյուպեռ Բլանի հետ շուրջ քառասուն րոպե տևած զրույցի ընթացքում խոսվեց հատկապես նահանգի հայ գաղութին, եկեղեցու կառույցին, միջեկեղեցական հարաբերություններին, Եկեղեցիների համեղբայրությանը վերաբերող հարցերի շուրջ:

Նահանգապետը ջերմ սիրով արտահայտվեց ֆրանսահայ գաղութի, երկրի քաղաքական ու տնտեսական, ինչպես նաև մշակութային կյանքում նրա ունեցած ձեռքբերումների մասին:

Երկրորդելով նահանգապետի խոսքը, Նորին Սրբությունը նախ շնորհակալություն հայտնեց հայապգի կավակների նկատմամբ Ֆրանսիայի Հանրապետության ցուցաբերած հոգատարության ու բարյացակամ վերաբերմունքի համար, ապա վստահեցրեց, որ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա այն ամենը, ինչ արել է իր համար Ֆրանսիան, որ հանգամանքների բերումով դարձել է երկրորդ հայրենիք՝ իր հարկի տակ առնելով աշխարհասփյուռ ժողովրդի մի կարևոր հատվածին: Նորին Սրբությունը շեշտեց, որ հայ ժողովուրդը գաղթական եկավ այս երկիր, բայց գաղթականի հոգեբանությունը շուտով թոթափեց իր վրայից և դարձավ լիիրավ ու շինարար քաղաքացի:

## ՍԵՆԹ ՄԱՐԳՐԵԹԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ՍԵՆԹ ԼՈՒԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Օրվա երկրորդ կեսին Նորին Սրբությունը, իր շքախմբի ուղեկցությամբ, եղավ Սենթ Մարգրեթի Ս. Աստվածածին և Սենթ Լուի Ս. Գևորգ եկեղեցիներում:

Ավանդական արարողություններից հետո, տեղի հոգևոր հովիվ Տ. Շահան ավագ քահանա Տերտերյանը բարիգալստյան ջերմ ու սրտառուչ խոսքեր ասաց:

Մոտիկից ծանոթանալով կույգ եկեղեցիների սրբաշեն կառույցներին, Նորին Սրբությունը գոհաբանական աղոթքով դիմեց Բարձրյալին՝ իրեն շնորհված նման գեղեցիկ հնարավորության համար: Ապա դառնալով դեպի ներկա հավատացյալները, նախ շնորհակալություն հայտնեց այդքան ջերմ ու սիրալիր ընդունելության համար, այնուհետև փոխանցեց իր հայրապետական պատգամը, որով խրախուսեց ժողովրդին և հորդորեց չգոհանալ եղածով ու ձգտել ավելիին, բացատրեց եկեղեցի բառի նյութական և հոգևոր իմաստները: «Բուն եկեղեցին հավատացյալներն են»,- ասաց և օրինակ բերեց «Վարդանանց»-ից. «ամեն մեկ կինվոր ինքն իր անձին մեջ եկեղեցի մըն է»:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ

### Ֆրանսահայ երիտասարդաց տանը

Գեղեցիկ և սրտառուչ հանդիպումներ էին սպասվում Ամենայն Հայոց Հայրապետին երեկոյան՝ Մարսելի Հայ մշակույթի տանը և

Ֆրանսահայ երիտասարդաց տանը: Երիտասարդաց տանը Վեհափառ Հայրապետի գալստյան առթիվ կազմակերպվել էր փոքրիկ համերգ:

Համերգային հոգելից հայտագրից հետո, Նորին Սրբությունն իր գնահատանքի խոսքն ուղղեց ֆրանսահայ երիտասարդներին՝ հատկապես շեշտելով այն հանգամանքը, որ նրանք հավատարիմ են մնացել իրենց ավանդներին և Ֆրանսիայի հողում ապրեցնում ու ծաղկեցնում են հայ մշակույթը: Գարեգին Ա Կաթողիկոսը առանձնակի նշեց, որ «լեզու չգիտնալը չի նշանակի հայությունից հեռանալ ընդհանրապես: Հայությունից կհեռանան այն ատեն միայն, երբ կմոռնան պապերից ժառանգածը, ինչն արյան կանչով կփոխանցվի սերնդե-սերունդ: Ամենեն կարևորը ոգու առողջ պահպանությունն է, ազգային պատկանելիության տոկուն գիտակցությունը, քրիստոնեական արժեքների գնահատումը մեր կյանքում»:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

Այստեղից Գարեգին Ա Կաթողիկոսն առաջնորդվեց դեպի Մարսելի Հայ մշակույթի տուն, ուր դիմավորվեց հոծ բազմությամբ, ծափողջույններով ու ավանդական աղ ու հացով:

Բարեողջույնի խոսքերի փոխանակումից հետո, Նորին Սրբությունը նախ շրջեց Մշակույթի Տան տարբեր բաժիններում, հետաքրքրությամբ դիտեց հայ գրին ու գրքին նվիրված ցուցահանդեսը, հանգամանալից ծանոթացավ Մշակույթի Տանը, այնտեղ այցելող հայությանը, նրանց կբաղմունքներին ու նախաձիրություններին, ապա կատարեց նորահաստատ Շավարշ Նարդունի գրատան հանդիսավոր բացումը, այդ առիթով հիշեց, որ ինքը 1968-ի օգոստոսի 2-ին ներկա է գտնվել հայ ժողովրդի երախտավորի հուղարկավորությանը Մարսելում, որ տեղի ունեցավ Պոմոնի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Ապա բարձրացավ Վասպուրական սրահ, ուր Հայոց Հայրապետին ջերմությամբ և հոտնկայս ծափողջույններով դիմավորեցին երեք հարյուրից ավելի հայորդիները:

Գեղարվեստական հակիրճ հայտագրից հետո, ամենքի անունից բարիգալստյան խոսք ասաց տիար Կարո Հովսեփյանը:

Վեհափառ Հայրապետն այստեղ, դիմելով հավաքված ժողովրդին, իր պատգամում ի մասնավորի ասաց.

«Իմ հոգևոր եղբայրներ, հարգարժան դեսպան և մշակութասեր քույրեր և եղբայրներ,

Այսօր ինձի համար հայտնություն մը եղավ մշակույթի տունը տեսնելը: Բնականորեն ես լսել էի, կարդացել էի մամուլի էջերեն անոր գործունեության մասին, բայց ուրիշ բան է լսելը, իմանալը, ուրիշ բան է տեսնելը: Տեսնելով՝ ինձ համար, այս հաստատությունը կյանքով լեցուն, օծուն, թրծուն մեկ հաստատության վերածվեց: Անուն, թվական, թիվ. ասոնք կդադրին չոր ու ցամաք տեղեկություններ ըլլալեն: Այսպես, օրինակ, իմ երևակայությամբը ես այս տունը կկարծեի գիտական աշխատանքի, հրատարակչական գործի, ցուցահանդեսներու վայր մը:

Բայց այս երեխաները երբ տեսա, երբ անոնց արտասանությունները լսեցի, երբ տեսա, որ անոնք ոչ թե միայն անցյալեն եկող մշակույթին ծանոթացման և տարածման տուն մըն է, այլ նաև ֆրանսահայ և հատկապես մարսիլիահայ մեր նոր սերունդի մշակութային կազմավորման օջախ մըն է, այն ատեն հասկցա, որ շատ ավելի մեծ է այս իրագործումը, քան ինչ որ ես կերևակայեի: Մշակույթի տունը այն օջախն է, որմե լույս կսփռվի այդ տունը եկողներուն և այդ տան հետ հաղորդության մեջ եղողներուն համար: Լուսաճառագայթ օջախ մըն է, ուր կուգաս, կլսես, կունկնդրես, կկարդաս, կդիտես, կխոսակցիս և երբ դուրս կուգաս, ավելի հարստացած կզգաս ինքզինքդ, ավելի ազնվացած կզգաս ինքզինքդ, ավելի մարդայնացած կզգաս և, պիտի ավելցնեմ՝ ավելի հայացած:

Երեք-չորս տարիներ առաջ, երբ Սորբոն էի, երբ Կիլիկյան վերջին թագավորի՝ Լևոն Հինգերորդի մահվան 600-ամյակի առիթով ցուցահանդեսի կմասնակցեի, և այդ իրիկունը հանդիսություն եղավ այնտեղ, դրվագ մը հիշեցի: Կուզեմ, որ դուք՝ մշակույթ սիրող քույրերս և եղբայրներս, այդ դրվագը երբեք-երբեք չմոռնաք: Կպատմվի, որ երբ Միքելանջելոն Մովսեսի արձանը շինեց Հռոմ քաղաքեն դուրս, գիշերցերեկ տագնապելով, ներշնչվելով, մարմարին հետ կռվելով՝ անձև, անիմաստ, անտաշ քարեն ձևավոր դեմք գծելով, երբ ավարտեց իր գործը, մեկ քայլ հեռացավ, ձեռքը գավազան մը առավ, փոքրիկ ճիպոտ մը, զարկավ արձանի գլուխին և ըսավ. «Խոսե՛ Մովսես»: Եվ կխոսի Մովսեսը իր արվեստին մեջեն: Արվեստն ու մշակույթը նյութը կհոգիացնեն, նյութը կդարձնեն սոսկ նյութ ըլլալեն և անոր վրա կդնեն մարդու հոգին, գաղափար, զգացում, իդեալ, արցունք, տառապանք, մեկ խոսքով ինչ որ մարդն է իր հոգեկան ապրումներուն մեջ: Ինչ է հայկական ձեռագիրը: Լաբորատորիայի մեջ աշխատող մեկ ֆրանսիացիի մը տվեք՝ պիտի ըսե կաշի, բայց կարդացող հայու մը տվեք՝ պիտի ըսե՝ Ս. Գիրք: Գիրը կաշիին վրա կդարձնեն կաշին կաշի ըլլալե: Մանրանկարը կդիտես, ավետարանիչները, խորանները գեղազարդ, և հոգիդ կվերանա:

Այսօր, մենք իբրև հայություն, անկեղծ ըլլանք մենք մեզի հետ, քանի ես այս մշակութային տան մեջ կգտնվիմ, կուզեմ այս հարցումը ուղղել ձեզի՝ ինչո՞վ հպարտ ենք, ինչո՞վ մեր ինքնությունը կարտահայտենք, ինչո՞վ: Եթե երբեք մեկ ֆրանսիացի բարեկամ մը, դրացի մը հարցնե, ինչո՞վ դուք, հայերդ արժեք ունիք աշխարհում, ի՞նչ կպատասխանեք: Պիտի տա՞ք արդյոք թագավորի մը անունը, որ երկիրներ գրավել է, պիտի տա՞ք արդյոք ուրիշ մեկ տնտեսական մեծ նվաճումներ կատարած մարդերու կամ ընկերություններու անուններ: Ո՛չ, պիտի տաք անունները հավատք քարոզող Գրիգոր Լուսավորչի, գիր ստեղծող և Աստվածաշունչ թարգմանող Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Մովսես Խորենացիի, Եզնիկ Կողբացիի, Ագաթանգեղոսի, Փավստոսի, Ղազար Փարպեցիի և մյուսներուն, մինչև Նարեկացի, Շնորհալի, Տաթևացի, Խրիմյան Հայրիկ, և մինչև մեր օրերու մտավորականները՝ նահատակ գրողներ Գրիգոր Զոհրապից, Դանիել Վարուժանից, Սիամանթոյից, Ռուբեն Սևակից սկսյալ մինչև մեր օրերը՝ այսօրվա ապրողները: Մեր տաճարները, մեր մագաղաթները՝ այս բոլորը եթե առնենք, մենք իսկապես կհպարտանանք մեր մշակույթով: Օր մը, երբ մեծ անգլիացի քաղաքական գործիչի մը հարցրել են՝ մեկ կողմը ամբողջ Հնդկաստանն

է իր բոլոր բնական հարստություններով, իր ունեցած բոլոր կարելիություններով, և մյուս կողմը Շեքսպիր, ո՞ր մեկը պիտի ընտրես: Զուտ քաղաքական մարդը, բնականորեն, պիտի ընտրե Հնդկաստանը: Բայց մարդ քաղաքական կամ տնտեսական մարդ ըլլալե առաջ, նախ ազգի մը, հոգիի մը մարմնացում է: Եվ նա կպատասխանե՝ Շեքսպիրը, որովհետև անիկա է մեր երեխաներուն կերակուրը հոգիի: Նրանք կկարդան անոր մեջեն գաղափարներ, անոր մեջեն կազնվանան, կմեծնան: Հնդկաստանը կուգա ու կերթա: Նյութը կուգա և կերթա:

Այսպես ալ մենք ունինք մեր մշակույթը և այս Մշակույթի Տունը ես կնկատեմ, գործածելով դարձյալ Պարույր Սևակի բառը՝ «Անլռելի զանգակատուն» է հայոց հոգիին: Բայց պետք է մոտենալ, ականջ բանալ՝ ձայնը լսելու: Քաղաքի ժխորին մեջ, ներկա աշխարհի թոհուբոհին մեջ, խճողումին մեջ մենք հաճախ կկորսնցնենք մեր մշակույթի ինքնության գիտակցությունը: Եվ մեր երիտասարդությունն ալ զոհ կերթա հաճախ անարժեք, անիմաստ երևույթների: Մեր մշակույթը պետք է կյանքի բերենք, վերստին խոսեցնենք և ոչ թե միայն անցյալի մշակույթը, այլ նորը ստեղծագործենք: Այսօր կտեսնեմ «Արենուշները», «Արիները», այս փոքրիկները և մեր շուրջը հավաքված երիտասարդությանը և կուզեմ այս Տան հոգաբարձությանը և անոր վարիչին՝ պրն. Կարոյին ուրախություն և գնահատանքս հայտնել, որ կհաջողիք երիտասարդներ հավաքել այս տան մեջ: Կմաղթեմ, որ այս Տունը դուք պահեք ձեր աչքի բիբի պես, որովհետև զայն պահելը կենդանի և գործոն, կնշանակե պահել զմեզ առողջ և հառաջագնաց՝ մեր մշակույթի մեջ: Անցյալի բոլոր գործիչներուն հարգանք ընծայելով և երկնքում իրենց հիշատակը օրհնելով՝ չգոհանանք անցյալովը, մեր հայրերուն կտակովը, չգոհանանք մեր ստացածովը, մեր ստացածը արժևորենք մեր ըրածովը: Եվ առատացնելով, շատցնելով, հառաջացնելով է, որ անցյալը կպահվի, այլապես անցյալը կխեղդվի ինքն իր մեջ, կչորնա»:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԺԱՖ-Ի ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ

Երեկոյան ժամը 18.30-ին Նորին Սրբությունն այցելեց ԺԱՖ-ի և Մշակութային Միության Ակումբ: Երիտասարդությունն ազգային տարազով և ծաղկեփնջերով դիմավորեց իր Հայրապետին, ապա ներկայացրին հայկական պարերի կատարման փոքրիկ հայտագիր:

Բարիգալատյան խոսքեր ասացին ԺԱՖ-ի անունից տիար Երվանդ Հարությանը, Մշակութային Միության անունից՝ տիար Սերժ Նորոյանը:

Վեհափառ Տերը ներկաներին ուղղեց քաջալերական խոսքեր՝ շեշտելով հատկապես, որ թեև օտար ափերում, այնուամենայնիվ, երիտասարդությունը հավատարիմ է մնում հարազատ ժողովրդի ավանդներին և պարի ու նվագի միջոցով արտահայտում իր ինքնությունը, իր մշակույթը: «Լեզուն չիմանալ, չի նշանակում հայությունից հեռանալ,- ասաց Վեհափառ Տերը,- ցույց տվեք. որ կենդանի, ապրող, շնչող և ստեղծագործող երիտասարդներ եք»:

Նորին Սրբությունն իր խոսքն ավարտեց «Պահպանիչ»-ով:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԲԸՄ ԿԵՆՏՐՈՆ

Ավելի ուշ, ժամը 19.30-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնատեղի, ուր Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասաց տիկ. Լյուսի Գյումճյանը՝ Հայոց Հայրապետի այցելությունը համարելով ոչ միայն անմոռանալի մի փաստ, այլև մեծ պատիվ, որ շատ երկար պիտի մնա ներկաների հիշողության մեջ, իսկ հոգիներում կթողնի անջինջ տպավորություններ:

Իր պատասխան խոսքում դիմելով հավաքվածներին, Վեհափառ Տերը խոսեց մարդկային պարկ, անշահախնդիր հարաբերությունների մասին՝ ընդգծելով, որ բարությունը արժևորվում է, երբ այն բարիքի է վերածվում:

Նորին Սրբությունը պանծացրեց հիշատակը վերջերս մահացած ՀԲԸՄ-ի բակում տարիների բակմավաստակ նախագահ մեծանուն բարերար Ալեք Մանուկյանի: Անդրադարձավ ՀԲԸՄ-ի ապգօգուտ դերին թե՛ արտասահմանի մեր հայության և թե՛ այժմ անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդի կյանքում:

### ՍԻՐՈ ՃԱՇ «ՔՈՆՔՈՐԴ ԲՐԱՏՈ» ՊԱՆԴՈԿՈՒՄ

Օրն ավարտվեց համաժողովրդային ճաշկերույթ-ընդունելությամբ, որ տեղի ունեցավ «Քոնքորդ Բրատո» պանդոկի գեղեցիկ սրահում, հընթացս որի փոխանակվեցին ջերմ ու սրտառուչ խոսքեր:

Ներկայացվեց նաև գրական-գեղարվեստական հատուկ հայտագիր:

Ապա ներկաներին իր հայրական խրատ-հորդորները տվեց Նորին Սրբությունը, ավելացնելով. «Թեև այսօր տասներորդ անգամ ճառ կասեմ, սակայն ես չեմ հոգնած»: Վեհափառ Հայրապետը խրախուսեց ժողովրդին՝ բոլորվել իր Եկեղեցու և Հայրենիքի շուրջը, կորացնել գաղութի ապգային կյանքը, պատմություն կերտել և ոչ թե պատմությունը միշտ վերհիշել, նայել դեպի ապագան որպես մեկ ապգ, մեկ հավաքականություն, մեկ ոգի և մեկ Եկեղեցի:

### ՍԵՆԹ ԺԵՐՈՄԻ Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունվարի 31-ի առավոտյան ժամը 9.00-ին Գարեգին Ա Կաթողիկոսն այցելեց Սենթ Ժերոմի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցի, ուր դիմավորվեց մեծ շուքով և ոգևորությամբ:

Տեղի հոգևոր հովիվ Տ. Վաչե Ծ. վրդ. Իգնատիոսյանի բարիգալստյան խոսքից հետո, ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Նորին Սրբությունը՝ կարևորելով Հայրենիքից հեռու բնակվող հայ հավատավոր ժողովրդի ձեռքբերումները, հայապահպանության գործում ունեցած անգնահատելի հաջողությունները:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՆԹ ԱՆՏՈՒԱՆԻ Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎ Ս. ԲԱՐԴՈՂԻՄԵՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Այստեղից Ամենայն Հայոց Հայրապետն ուղղվեց դեպի Սենթ Անտուանի բարձունքում գտնվող երկու Առաքյալների անունը

կրող եկեղեցի, ուր մեծ ցնծությամբ դիմավորվեց հավատացյալների խուռներամ բազմության կողմից:

Իր հավատավոր հոտի անունից Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասաց հոգևոր հովիվ Տ. Վարդավառ քհն. Գասպարյանը:

Այնուհետև ներկաներին իր պատգամը հղեց Գարեգին Ա Կաթողիկոսը:

## ԲՈՒԼՎԱՐ ՕՏՏՈՅԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Բուլվար Օտտոյի Ս. Հակոբ եկեղեցին ներս ու դրսից լեփ-լեցուն էր հավատավոր հայորդիներով, որ եկել էին դիմավորելու իրենց Հայրապետին, ունկնդրելու նրա իմաստալից հորդորները:

Իր ծիսի հոգևոր ցնծության թարգմանը եղավ հոգևոր հովիվ Տ. Նշան քհն. Գույումճյանը: Թաղականությունը Հայոց Հայրապետին նվիրեց եկեղեցու բակում կանգնեցված հուշարձանի փայտյա մանրակերտ քանդակը, որի առջև Նորին Սրբությունը հոգեհանգստյան կարգ կատարեց և կետեղեց ծաղկեպսակ:

Իր պատգամ-խոսքում Գարեգին Ա Կաթողիկոսը շեշտը դրեց հավատքի կորացմանը, եկեղեցու բարեփոխմանը, Հայաստանի և Հայաստանյայց Եկեղեցու առջև բացված նոր ճանապարհներին՝ պահանջելով բոլորի գիտակից հանձնառությունը:

Այստեղից Նորին Սրբությունն առաջացավ դեպի Քամբ-Ֆրեպի Ս. Կարապետ եկեղեցի տանող ճանապարհի սկիզբը և օրհնեց այնտեղ հավաքված խուռներամ բազմությանը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՐՍԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԵՎ ՊԵՏՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ԿԼՈԴ ԿՈԴԵՆԻ ՀԵՏ

Հունվարի 31-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց քաղաքապետարան, ուր իրեն ողջունեցին Հայաստանի Հանրապետության հիմներգով:

Մուտքի մոտ դիմավորելով Նորին Սրբությանը, քաղաքապետ Ժան Կլոդ Կոդեն նրան առաջնորդեց պատվո դահլիճ:

Այստեղ Նորին Սրբությանն ուղղած իր ողջույնում պրն. Կոդեն բարձր գնահատեց հայ գաղութը, որն արդեն երկար տարիներ իր ուրույն տեղն է կբաղեցրել քաղաքի կյանքում:

Պատասխան խոսքում Վեհափառ Հայրապետը խոսեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու ներկա իրավիճակի, միջեկեղեցական հարաբերությունների, ինչպես նաև Հայաստանում քրիստոնեության պետականացման 1700-ամյակի տոնակատարության առիթով անցկացվելիք միջոցառումների մասին: Նաև շնորհակալություն հայտնեց՝ ֆրանսահայության հանդեպ դրսևորած այդքան սիրալիր վերաբերմունքի համար:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՄԱՐՍԵԼ-ԷՍՊԵՐԱՆՍ»-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Քաղաքապետի հետ ունեցած հանդիպումից հետո, Ամենայն Հայոց Հայրապետը տեսակցեց «Մարսել-Էսպերանս»-ի անդամների հետ, հընթացս որի երկուստեք ծավալվեց մտերմիկ ու ջերմ զրույց:

Ասենք, որ «Մարսել-Էսպերանս»-ն իր կայքում ընդգրկում է քաղաքի բոլոր Եկեղեցիների /քրիստոնյա և ոչ քրիստոնյա/ հոգևոր պետերին:

Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԾ ՏՅՈՒ ՌՈՆ ՆԱՀԱՆԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Հունվարի 31-ին, երեկոյան ժամը 17.00-ին, Գարեգին Ա Կաթողիկոսը ժամանեց Բուշ Տյու Ռոն նահանգի Ընդհանուր խորհուրդ: Խորհրդի նախագահ Լյուսիեն Վիեկան, որ քաջածանոթ էր Հայ Եկեղեցու պատմությանը և եղել էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, բարիգալստյան ջերմ խոսքեր ուղղեց Նորին Սրբությանը և հաջողություններ մաղթեց նրան իր առաքելության մեջ:

Պրն. Վիեկան ողջունեց նաև Հայոց պետականության վերականգնումը և պատրաստակամություն հայտնեց՝ շարունակելու աջակցությունը իր ինքնությունը հավատող հայ ժողովրդին: Նա վերհիշեց նաև իր այցելությունը Ս. Էջմիածին:

Շնորհակալություն հայտնելով նման ջերմ վերաբերմունքի համար, Նորին Սրբությունը խոսեց ներկա դժվարին փուլում Հայ Եկեղեցու անելիքների մասին, ներկայացրեց իր շրջագայության նպատակը:

Վերջում տեղի ունեցավ նվերների փոխանակում, ինչպես նաև տրվեց ճոխ հյուրասիրություն:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՍԵԼԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Հունվարի 31-ին, երեկոյան ժամը 18.30-ին, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Մարսելի արքեպիսկոպոս Բեռնար դը Պանաֆիոյին, մասնակցեց «Աբեի Սենթ Վիկտոր» էկումենիկ հանդիպմանը և պաշտամունքին:

Ողջունելով Նորին Սրբության գալուստը, Բեռնար արքեպիսկոպոսը խոսեց քրիստոնյա Հայաստանի անցած 1700 տարիների մասին՝ հիշատակելով այնպիսի դեպքեր ու անուններ, որոնք մեծ դեր են խաղացել Հայ Եկեղեցու կյանքում:

Վեհափառ Հայրապետը պատասխան խոսքում, շնորհակալություն հայտնելով ջերմ բարեմաղթանքների համար, անդրադարձավ դեկտեմբերին Հռոմ կատարած այցելությանը, Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ ունեցած հանդիպումներին, ապա խոսեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնախմբության կազմակերպչական աշխատանքների մասին:

Բարեկամական հանդիպումն ավարտվեց «Հայր մեր»-ով և «Պահպանիչ»-ով:

## ԱՅԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Օրվա երկրորդ կեսին Նորին Սրբությունը մասնակցեց Մարսելի եպիսկոպոսների կողմից տրված սիրո ճաշին:

Ժամը 15.00-ին տեղի ունեցած մամլո ասուլիսում պատասխանեց տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչների հարցերին:

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց հայկական միությունների ներկայացուցիչներին:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 21.00-ին, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Մարսելի Համագումարների պալատում հանդիպեց գաղութի երիտասարդության հետ: Երեկույթը բացվեց «Ս. Սահակ-Մեսրոպ» երգչախմբի ելույթով: Վեհափառ Հայրապետին ուղղված Ժ. Տեր-Մերկերյանի բարիգալատյան մաղթանքներից ու ողջույնի խոսքերից հետո, ներկաների և Նորին Սրբության միջև ծավալվեց աշխույժ և մտերմիկ կրույց: Հայրական սիրով պատասխանելով տրված բոլոր հարցերին, Նորին Սրբությունը շեշտը դրեց մայրենի լեզվի, առաքելականդ և լուսավորչահիմն հավատքի, հայրենասիրության և հայրենաշինության վրա՝ հայ երիտասարդներին կոչելով միասնության հանուն մեր Հայրենիքի խոստումնալից ապագայի, ինչպես նաև հարապատ ժողովրդի բարգավաճման ու վերածաղկման:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՐՍԵԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 1-ին, շաբաթ օրը, անմոռանալի ու անջինջ տպավորություններով արձանագրվեց մարսելահայության կյանքի պատմության հուշամատյանում, քանզի այդ օրն իրենց համար մի կատարյալ տոն էր՝ անմեկնելի խորհրդով ու Քրիստոսականդ սիրով ջերմացած:

Այդ օրը բարձր ու հնչեղ ողողանջեցին Մարսելի Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցու զանգերը՝ ի մի բերելով ողջ հավատավոր հայությանը: Ամենքը եկել էին՝ մեծ ակնածանքով մասնակցելու մատուցվող Հայրապետական Սուրբ և անմահ Պատարագին:

Հընթացս արբական արարողության, Նորին Սրբությունը տվեց իր հայրապետական պատգամ-քարոզը՝ բնաբան ունենալով. «Ես եմ հովիւն քաջ, հովիւն քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» տողերը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության և Մարսելում ապրած գեղեցիկ պահերի համար: Նորին Սրբությունը շեշտեց, որ Մարսելից հեռանում է հոգով կրկացած և ամենաջերմ զգացումներով:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԻՈՆԻ ՇՐՋԱՆ

### Այցելություն Լիոնի հայոց Ս. Հակոբ Մայր եկեղեցի

Փետրվարի 1-ին, ժամը 15.30-ին, Գարեգին Ա Կաթողիկոսը, պրն. Սերժ Մանուկյանի կողմից տրամադրված հատուկ ինքնաթիռով, ժամանեց Լիոն:

Հանդիսավոր թափորը «Հրաշափառով» մուտք գործեց Լիոնի Ս. Հակոբ Մայր եկեղեցի, ուր անհամբերությամբ Վեհափառի շնորհաբեր այցելությանն էր սպասում հավատացյալների խուռներամ բազմությունը:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Հայրապետական պատվիրակ Գյուտ արքեպիսկոպոսը, Տարոն և Նարեկ եպիսկոպոսները, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Բեքչյանը, ինչպես նաև Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ և լիապոր դեսպան Վիգեն Չիտեչյանը:

Վեհափառ Հայրապետի օրհնաբեր գալուստը ողջունեց Լիոնի շրջանի Հայրապետական փոխանորդ Նորվան եպս. Զաքարյանը: Բարիգալստյան իր խոսքում Նորվան սրբազանը ուրախություն հայտնեց այս այցելության առիթով, հիշեց, որ Լիոնի գաղութը մեկ անգամ ևս վայելել է Կաթողիկոսական օրհնաբեր այցելությունը՝ ընդունելով Հայոց Հայրապետի անվանակցին՝ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա, ինչպես նաև Ամենայն Հայոց Վազգեն Ա երջանկահիշատակ Հայրապետներին:

Ապա տաճարը լեցուն ժողովրդին իր հայրապետական պատգամը տվեց Նորին Սրբությունը: Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունեց ներկաներին՝ նշելով, որ ինքը ծանոթ էր ֆրանսահայությանը, առավելաբար Փարիզի և Հարավային Ֆրանսիայի հայությանը, ապա ավելացրեց. «Այսօր ահա, ծանոթանում եմ Կենտրոնական Ֆրանսիայի հայապգի կավակներին»:

## ԼԻՈՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ «ՄԱՐԳԱՐՅԱՆ-ՓԱՓԱԶՅԱՆ» ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՑՈՒՄԸ

Եկեղեցուց Վեհափառ Հայրապետին առաջնորդեցին դեպի նորակառույց հայկական դպրոց, որի օրհնության և բացման հանդիսավոր արարողությունը նախագահեց Նորին Սրբությունը: Վեհափառ Հայրապետը հայերեն և ֆրանսերեն լեզուներով իր խոր գնահատանքը հայտնեց «Մարգարյան-Փափազյան» դպրոցի այս շքեղ շենքի կառուցման և այնտեղ առաջ տարվող կրթադաստիարակչական գործի համար: Նա ջերմ խոսքերով ողջունեց բարերարներին, Նորվան Սրբազանին, հոգաբարձությանը և ֆրանսիական պետության կրթական իշխանություններին այս մեծ իրագործման համար

Նորին Սրբության օրհնությունից հետո, թե՛ Հայոց Հայրապետին և թե՛ բոլոր ներկաներին բարեմաղթանքի խոսքեր ասաց Նորվան եպս. Զաքարյանը: Սրբազան Հայրը հակիրճ ներկայացրեց դպրոցի պատմությունը, երբ 1984-85 թթ. Մարգար և Արփինե Մարգարյանները ազնվական ոգով Տիգրան Փափազյանից ժառանգած իրենց կտակը նվիրել են եկեղեցուն:

Սրբազան Հոր խոսքից հետո հաջորդաբար ելույթներ ունեցան Լիոնի քաղաքապետ Ռ. Պառի ներկայացուցիչը՝ Քրիստիան Ֆիլիպը, ինամակալության նախագահ Իվ Ռուելը և տնօրինուհի տիկ. Տրպեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ հայերեն և ֆրանսերեն

լեկուներով արտահայտվեց, առավելաբար կենտրոնացավ դպրոցին և կրթական խնդիրներին վերաբերող հարցերին:

Բացման հանդիսությանը ներկա էր տիկ. Արփինե Մարգարյանը, որ մեծ հուզումով և շնորհակալությամբ վկան եղավ Վեհափառ Հայրապետի ու համայնքի կողմից ցույց տրված սիրույն և երախտագիտությանը:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին նաև «Հայաստան» հիմնադրամի նախագահ Պ. Թերկյանը, «Յառաջ»-ի տնօրինուհին:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ ՍՈՖԻԹԵԼ ՊԱՆԴՈԿՈՒՄ

Հանդիսավոր արարողությունից հետո, Սոֆիթել պանդոկում, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ, հոգևորականներ, քաղաքական գործիչներ, ակգայիններ:

Ռ. Տոնիկյանի ողջույնից հետո, Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասաց Լիոնի արքեպիսկոպոսի ներկայացուցիչ գերապատվելի Աբել Գորնիյոն և շեշտեց, որ Լիոնի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիներն ունեն ընդհանրություն: Դա առաքելական պարտականությունները կատարելու ձիրքն է:

Ապա ելույթ ունեցավ «Հայաստան» հիմնադրամի նախագահ Պ. Թերկյանը: Խոսելով Նորին Սրբության այցելությանը, նորաբաց դպրոցին բերած հիմնադրամի օժանդակությանը, վերանկախացյալ Հայրենիքի հետ ունեցած կապին, պարոն Թերկյանը, օգտվելով Ֆրանսիայի մի շարք քաղաքական դեմքերի ներկայությունից, անդրադարձավ նաև Ղարաբաղյան հիմնախնդրին, հույս հայտնեց, որ Ֆրանսիան կվերանայի իր դիրքորոշումը:

Վերջում ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Գարեգին Ա Կաթողիկոսը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Օրվա երկրորդ կեսին, տեղական ժամանակով ժամը 16.00-ին, Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ քաղաքի երիտասարդության հետ՝ Գալյուրիի քարաքապետարանի «Լը Ռատիան» կենտրոնի սրահում, ուր ի մի էր եկել երիտասարդների հոծ բազմությունը:

Նորին Սրբությունը սրահ ժամանեց իրեն ընկերակցող եկեղեցականների և Նորվան եպիսկ. Զաքարյանի ուղեկցությամբ:

Հայերեն և ֆրանսերեն լեկուներով բացման խոսք ասացին տիկին Ժանին Բալուլյանը և պարոն Գեղամ Կանանյանը:

Ապա ներկայացվեց գեղարվեստական հակիրճ հայտագիրը:

Այնուհետև խոսեց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը նախ սահմանեց երիտասարդ բառի իր ըմբռնումը, ապա շեշտը դրեց պատմական այն իրողության վրա, որ հայ ժողովրդի Ոսկեդարը՝ 5-րդ, Արծաթյա դարը՝ 12-րդ և գրական կարթոնքը՝ 19-րդ դարերում հիմնվել են երիտասարդների նվաճումների վրա:

Նորին Սրբությունը պատասխանեց նաև իրեն առաջադրված բոլոր հարցերին, որոնք վերաբերվում էին Հայաստանյայց Եկեղեցու ապգային նկարագրին, 70 տարիների բերած վնասներին, Հայաստանը շրջապատող իսլամ երկրների հետ փոխհարաբերություններին, գրաբարն աշխարհաբարով փոխարինելու պահանջին, Էջմիածին-Անթիլիաս կապերին, վեհափառ Հոր մտածումներին, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ ունեցած հանդիպմանը:

Հանդիպումն ավարտվեց ժամը 18.30-ին:

Ոգևորված երիտասարդությունը սիրելի Հայրապետին հրաժեշտ տվեց «Հայրապետական մաղթերգ»-ի երգեցողությամբ:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԼԻՈՆԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 2-ին Լիոնի Ս. Հակոբ Մայր եկեղեցում մատուցվեց հայրապետական Ս. Պատարագ:

Հայրապետական Ս. Պատարագին ներկա էին նաև Հույն, Կաթողիկե և Բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչները:

Հընթացս Սրբազան արարողության, դիմելով ներկաներին, Նորին Սրբությունը պատգամեց հավատարիմ մնալ Մայր Հայրենիքին, հայոց ապգին և Հայ Եկեղեցուն: Վեհափառ Հայրապետը գնահատանքի խոսք ուղղեց Նորվան Սրբազանին, հոգաբարձության և կազմակերպիչ հանձնախմբին՝ այս հայաշունչ ընդունելության համար: Հայոց Հայրապետի օրվա քարոզի բնաբանն էր ավետարանական հետևյալ խոսքը. «Եղէք կատարեալ, ինչպէս Հայրն ձեր Երկնաւոր կատարեալ է»:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԼԻՈՆԻ Ս. ՀԱԿՈԲ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Սիրելի հոգևոր եղբայրներ և շատ սիրելի ու թանկագին հավատացյալներ, հավատարիմ զավակներ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցվո, որ կապրիք Ֆրանսայի կենտրոնական այս շրջանին մեջ, որպես ձեր գաղութային կյանքի սիրտը ունենալով Լիոն քաղաքը և այս Սուրբ Եկեղեցին՝ Սուրբ Հակոբի անունով կնքված:*

*Ես ձեզի իմ խոսքն ուղղելեն առաջ, կուզեմ սրտես բխած բառերը այսօրվան խնկամանին մեջ դրված խունկի նման դեպի երկինք ուղղել առ Աստված, առ Հայրն մեր Երկնավոր և ըսել. «Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ...»: Փառք Քեզ, Աստված, որ տվիր ինձի այս շնորհը, այս երջանկությունը հոգևոր, այս պատիվը, որ ես կարենամ աղոթքով իմ ժողովրդի հետ ըլլալ, որովհետև Ս. Պատարագը մեր կյանքին ամենեն ուժեղ և մեր համայնությունը, ամբողջությունը իր մեջ արտահայտող հոգեղեն պահն է:*

*Հաղորդակից կդառնամ ձեզի հետ և այսօր կուզեմ, որ բոլորս ալ մենք զմեզ դիտենք Աստուծո նայվածքին ներքև, Աստուծո ուսուցումներուն, Քրիստոսի Ավետարանին և մեր Սուրբ Հայրերու սրբազան ավանդության հայելիին մեջ:*

Պետք է ըսեմ, որ Ֆրանսայի հայությունը ինձի համար բոլորովին անծանոթ հայություն չէ, հատկապես Փարիզի շրջանին մեջ, Մարսելի շրջանին մեջ: Զանազան առիթներով, վարդապետության օրեն ասդին, ես ունեցած էի երջանիկ պահեր՝ այցելելու, տեսնելու Փարիզը և իր շրջանները, ինչպես Մարսել և իր շրջանները, բայց Լիոնի այս շրջանի հայությունը ես այնքան մոտեն չէի ճանչցած, ինչքան ճանչցած էի մյուս շրջանները: Հետևաբար իմ հովվապետական այցելության ամենեն քաղցր բաժինը, կրնամ ըսել, այս բաժինն է, որ առաջին անգամը ըլլալով որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց կդառնամ հաղորդակից ձեզ հետ: Պիտի լսեմ ձեզի, պիտի զգամ իմ մեջ ձեր հավատքին կենդանությունը և պիտի խոսիմ ձեզի, պիտի բաժնեմ ձեզի հետ հացի ու աղի պես իմ մտածումները, իմ զգացումները, իմ հեռանկարները մեր պատմությանը մեջ բացված այս նոր շրջանին մասին, որ դարձակետային, վճռադրոշմ նշանակություն ունեցող շրջան մըն է մեր ողջ հայոց դարավոր պատմության ընթացքին:

Շնորհակալ ենք, սիրելի Նորվան սրբազան, որ Դուք Ձեր քաղցր ու սրտաբուխ խոսքին մեջ հիշեցիք այստեղ այցելող ուրիշ Կաթողիկոսներ Գարեգին Ա Հովսեփյանց և Վազգեն Ա երջանկահիշատակ և անմոռանալի Կաթողիկոսը, երկուքն ալ իմ նախորդները, մեկը՝ Կիլիկյան Աթոռին վրա և մյուսը Մայր Աթոռին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Գահին:

Այսօր ես կուգամ ձեզի նույն Աթոռեն, նույն Հայաստանեն, բայց ո՛չ այն պատկերին մեջեն, ո՛չ այն մթնոլորտին մեջեն, ո՛չ այն կյանքին պայմաններուն մեջեն, ուրկե եկան անոնք 1950-ին, 1956-ին և կամ 1975-ին: Այսօր կուզեի, որ ձեզ ողջունելեն ետքը և ձեր այս բազմության, խուռներամ բազմության մեջ տեսնելեն ու կարդալեն ետքը ձեր հավատքի և կապվածության, ձեր հավատարմության ապրումները՝ հանդեպ մեր Սուրբ Եկեղեցվո, կուզեի բերել ձեզի նույն Հայաստանեն, նույն Մայր Աթոռեն, բայց ուրիշ պատգամ մը, քան ինչ որ իմ նախորդները կրնային բերել իրենց օրերեն:

Այսօր բոլորս ալ կզգանք, որ հայությունը ողջ աշխարհի՝ թե՛ Մայր Հայաստանի, թե՛ Արցախի և թե՛ սփյուռքին տարածքին, կյանքի մի նոր ուղիի մեջ մտած է: Այդ ուղին մեր ժողովուրդը երկար տարիներե, դարերե ի վեր կորսնցուցած էր: Այս ուղիին, այս ճանապարհին անունն էր ազատություն և անկախություն: Մեզմե շատերուն ծնողները այդ ազատությունը երգեցին, երգել սորվեցուցին, երազեցին, երազել սորվեցուցին մեզի: Պահեցին հույսը կենդանի և ներշնչեցին մեզի կտակը իրենց, որ չկորսնցնենք այդ հույսը: Օր մը այդ հույսը մարմին պիտի առներ, երազը պիտի կյանք ստանար: Եվ այսօր մենք բոլորս, ուր ալ գտնվինք, ինչ տարիքի վրա ալ որ ըլլանք, ինչ պայմաններու տակ ալ որ ապրինք, պետք է ընդունինք, որ բախտավոր սերունդ մըն ենք, որովհետև մեր աչքերով տեսանք այն, ինչ-որ իրենց աչքերը փակած ատեն այս աշխարհեն, մեր հայրերը չկրցան տեսնել, բայց երազը իրենց աչքերուն մեջ գացին, իսպառ մեկնեցան այս աշխարհեն:

Կուգամ ձեզի այն Մայր Աթոռեն, որ երկար տարիներ գտնվեցավ այնպիսի կացության մը մեջ, որ պահեց, պահեց մեր հոգևոր ծննդավայր Ս. Էջմիածինը, որպես խորհրդանիշը մեր հավատքի: Մեր երջանկահիշատակ նախորդը՝ Վազգեն Ա Կաթողիկոսը, 39 տարիներ ծաղկեցուց,

շենցուց այդ կենտրոնը, բայց գործունեությամբ, հարաբերությամբ, ժողովրդի մեջ ներգործությամբ, աշխատանք չէր թույլատրված իրեն պայմաններուն բերումովը, որոնք ծանոթ են ձեզ բոլորիդ:

Այսօր Մայր Աթոռը իր Քրիստոսավանդ առաքելությունը և լուսավորչաշավիղ իր գործունեությունը առաքյալներեն սկիզբ առած, կկատարե և կոչված է առավել չափով կատարելու, որովհետև կվայելե բոլոր տեսակի ազատությունները, որ կրնաք դուք երևակայել ոևէ երկրին մեջ, մանավանդ այն երկրին մեջ, ուր ապրած եք կամ կապրիք և տեսած եք կենդանի վկայությամբ ազատության բարիքները:

Կուգամ ձեզի այն ժողովուրդեն, այն Հայրենիքեն, որ այլևս իր կամքին, իր ըմբռնումին, իր զգացումներուն համապատասխան կշռույթով կապրի իր կյանքը: Այն հայ ժողովրդի կամքի արտահայտությունն է իր հողին վրա: Թե ինչ պիտի ըլլա Հայաստանը, այդ արդեն հայության կամքեն և զգացումեն կախում ունի:

Այսօր, ահավասիկ, ունենք անկախ պետություն, սակայն ունենալը մեկ բան է, պահել ապահով, զարգացնել, զորացնելը՝ ուրիշ բան: Քաղաքական պայմանները այնպես դասավորվեցան ամբողջ Խորհրդային Միության տարածքին վրա, որ մենք գիտցանք պատմության դեպքերու դարձվածքին առիթը չփախցնել և մեր ինքնանկախությունը հռչակել: Գիտեք, որ մեր ժողովուրդը սարդարապատյան կամքով, իր մայիս 28-ով իր կամքը արտահայտեց, երբ առիթը ներկայացավ քաղաքական դեպքերուն ընթացքը նպաստավոր դարձավ, և մենք ունեցանք մեր առաջին հանրապետությունը 1918 թվականին: Բայց դեպքերը այնպես շրջեցան, որ երկու տարվա կյանքեն ետքը կորսնցուցինք այդ ձեռք բերված ազատությունը և անկախությունը, և մենք մանավանդ սփյուռքին մեջ ապրող հայերս, մանկության օրերեն այդ տեսիլքը ընդմիշտ ապրեցանք և ազատությունը երգեցինք:

Մենք այսօր, երբ գտանք ազատությունը և անկախությունը, հարցն այն է, թե ինչ պատասխանատվություն կզգանք ազատագրված մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և թե ինչ պարտավորություն կզգանք մեր ազատ ու անկախ Հանրապետության՝ Հայաստանին հանդեպ: Երբ իր կաթողիկոսության գահակալության շրջանին երեք անգամ այստեղ եկավ Վազգեն Ա Վեհափառը, իր կողքին չկար անձ մը, որ այսօր իմ կողքիս կընկերանա ինձի այս հովվապետական այցելությանս ընթացքին՝ մեր Հայաստանի Հանրապետության դեսպանը:

Այսօր ես կոչ կուղղեմ մեր բոլոր ժողովուրդին, որ զգա իր մեջ այս փոփոխության անդրադարձը: Եթե մենք պիտի մնանք այնպես, ինչպես էինք ասկե առաջ, ես կկարծեմ, որ մենք պատմության ձայնին հետևած չենք ըլլար, պատմության շարժումին, փոփոխությանց համաձայն ապրած չենք ըլլար մեր կյանքը: Այսօր ամեն մեկ հայ, ուր ալ գտնվի, ինք զինքը պիտի զգա տարբեր: Այն երկրին մեջ, ուր կապրի, թեկուզ Ֆրանսայի, ինչպես ուրիշներ ուրիշ երկիրներուն մեջ, բնականորեն այդ երկրին կյանքին կմասնակցի երկրին քաղաքացիի իրավունքներով և պարտավորություններով և ուրախ եմ ըսելու, որ թե Փարիզին մեջ և թե Մարսելին մեջ ես լսեցի այնտեղ վկայություններ պետական, եկեղեցական և կամ քաղաքական իշխանությունների ներկայացուցիչներեն, որոնք կընդունեին և կհայտարարեին, թե հայությունը Ֆրանսայի մեջ այլևս չէ այն գաղթական հայը որ եկավ 1915-են ետքը:

Ներքին հոգևոր հայրենիք կկոչեմ ես այն կապվածության զգացումը, որ մենք ունինք մեր Մայր հայրենիքի և մեր Մայր Եկեղեցիի հանդեպ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ: Այդ հայրենիքը, հոգևոր այդ հայրենիքը աշխարհագրական սահման չի ճանչնար: Քաղաքական ուժերը սահմաններ կգծեն կամ զինվորական գործողությունները: Երկիրները կչափվին կիլոմետրերով, բայց հայության այն հայրենիքը, որուն կպատկանին բոլոր անոնք, որոնք ունին իրենց մեջ գիտակցությունը իրենց հայ ըլլալուն, արյունը՝ ժառանգված իրենց հայրերեն, հավատքը իրենց փոխանցված Լուսավորչի Սուրբ կտակով, ունի իր մշակույթի զգացումը իր մեջ, ոչ մեկ աշխարհագրական սահման չի ճանչնար: Եվ դուք այդ հայրենիքին քաղաքացիներն եք, այդ հայության հարազատ զավակներն եք, նույնիսկ եթե երբեք անձնագրով Հայաստանին Հանրապետության քաղաքացիները չըլլաք, դուք չեք դադրի հայության քաղաքացիները ըլլալեն:

Եվ ատոր համար ես եկած եմ այսօր բերելու ձեզի այն նոր Հայաստանի, նորոգյալ Մայր Աթոռի, նորացյալ մեր երկրին, մեր ժողովուրդին ու մեր Եկեղեցիին շունչը: Եկած եմ ըսելու, որ բոլորս ալ այդ շունչով պիտի ապրինք և մեր կյանքին մեջ այլևս ողբի հայրենիք, որբի հայրենիք, սուգի հայրենիք, ավերի հայրենիք չըսենք, ալ կբավե՛: Ջարդված ենք, հալածված ենք, կբավե՛ այդքան ըսելը: Այժմ ըսենք հարություն առած ենք, նոր ժողովուրդ ենք, նոր կյանք ունինք: Մենք, առանց մոռնալու մեր նահատակները, առանց մոռնալու մեր ցավը, պիտի նայինք այսօրվան մեր կյանքին և պիտի հառաջանանք դեպի հոն, ուր մեր պատմությունը մեզ կուղղե և Աստված մեզ կկանչե, մեր ժողովուրդին հարազատագույն ապրումները մեզ կառաջնորդեն:

Իմ խոսքս կփակեմ այն մտածումովը, որ մենք այսօր ըլլալով նոր Հայաստանին մեջ յոթանասուն տարիներու կարծրացած գոյավիճակ մը ունինք, այդ գոյավիճակը պիտի փոխենք: Ես վաթսուն տարիներես ավելին արտասահման ապրած եմ: Եվ այլևս կյանքս ամբողջ, Աստված որքան որ տա ամբողջը հայրենիքին հետ, հայրենիքին մեջ, հայրենիքին համար պիտի ընծայեմ և իմ Սուրբ Եկեղեցիիս, ուր ալ ըլլա այդ եկեղեցին, հայրենիքին մեջ, Արցախին մեջ, թե արտասահմանում:

Կուզեմ, որ մեկ բան գիտնաք դուք, որ փառք տանք Աստուծո, որ այդ երեսուն հազար քառակուսի կիլոմետր տարածություն հողն ունինք, որ հայուն ձեռքերուն մեջն է: Եղբայրներ, քույրեր, այդ հողը կյանք դարձնենք և այլևս ուրիշին նայելու, ուրիշեն բան ակնկալելու հոգեբանութենեն դուրս գանք: Հարկ է, որ ընդհանրական շահը վեր դասենք մանրոգի, ժամանակավոր, մակերեսային վաղանցուկ այն հարցերեն, որոնք մեր առօրյա կյանքը երբեմն կխոովեն, որոնք այլևս ինձի համար իրենց արժեքը կորսնցուցած են: Նոր հույս, նոր ցանք, վերանորոգում, այդ է իմ նշանաբանը, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որուն առաջին սպասավորն եմ այսօր, դառնա հոսանք, դառնա ջրտուք մեր ժողովուրդին հոգևոր կյանքին մեջ, դառնա առաքելություն, որ խմորե մեր ժողովուրդին կյանքը քրիստոնեական հավատքի և մեր հայկական Եկեղեցվո զորացումով: Թող Աստված զորացնե ձեզ բոլորդ:

Պատարագից հետո, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը քաղաքի մշակույթի տանը հանդիպեց նաև հայ երիտասարդության հետ և պատասխանեց նրանց հուզող տարբեր հարցերին: Գարեգին Ա Վեհափառը յուրովի սահմանեց «երիտասարդ» բառի իմաստը, ապա շեշտադրեց պատմական այն իրողությունը, թե հայ ժողովրդի Ոսկեդարը եղավ 5-րդը, Արծաթե դարը՝ 12-րդը, իսկ գրական կարթոնքը՝ 19-րդ դարը:

## ՄԵԿՆՈՒՄ ՍԵՆԹ ԷԹՅԵՆ

Փետրվարի 3-ի առավոտյան մեքենաների շարասյունը ուղղվեց դեպի Լիոնից ոչ շատ հեռու գտնվող Սենթ Էթյեն քաղաք:

Ասենք, որ այս քաղաքում այսօր բնակվում են համեմատաբար քիչ հայեր, սակայն եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալներով: «Հրաշափառ»-ով մուտք գործելով եկեղեցի, Նորին Սրբությունը թափորի ուղեկցությամբ առաջնորդվեց դեպի Ավագ խորան: Կանոնական աղոթքից հետո Վեհափառ Տերը բոլոր ներկաներին ուղղեց իր հայրապետական պատգամը՝ հորդորելով ապրել հայաբար, պարտքի զգացումով վերաբերվել Հայրենիքին, ավելի ամուր կապվել Հայ Եկեղեցուն:

Եկեղեցում ներկա էին նաև Սենթ Էթյենի քաղաքապետ Թիոլիեր Միշելը, Հույն և Կաթողիկե Եկեղեցիների ներկայացուցիչներ:

## ՍԵՆԹ ԷԹՅԵՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Եկեղեցուց շքախումբը, Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի գլխավորությամբ, առաջնորդվեց դեպի քաղաքապետարան: Այստեղ Վեհափառ Հայրապետը զրուցեց քաղաքապետի, հաստատության աշխատակիցների հետ, ինչպես նաև պատասխանեց ներկա լրագրողներին հետաքրքրող հարցերին:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԱԼԱՆՍԻ Ս. ՍԱՀԱԿ ԵԿԵՂԵՑԻ

Նույն օրը, փետրվարի 3-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեց Վալանս: Քաղաքի մուտքի մոտ Նորին Սրբությանը դիմավորեցին Վալանսի նահանգապետ Ժան Գադֆրուան, քաղաքապետ Պատրիկ Լաբունը, պաշտոնական այլ անձինք, հայ ազգայիններ և Վեհափառ Հայրապետին առաջնորդեցին դեպի Վալանսի հայոց եկեղեցի, որտեղ Նարեկ ավ. քհն. Վարդանյանի գլխավորությամբ սպասում էր ողջ հավատացյալ ժողովուրդը:

Կանոնական աղոթքից հետո դիմելով ներկաներին, Վեհափառ Հայրապետն ասաց. « Ես եկել եմ նոր ուժ տալու ձեր հավատքին: Միայն անցյալի հիշատակներով պետք չէ ապրել: Ապրենք նոր կյանքով, վերանորոգված հավատքով, որպեսզի մեր Եկեղեցին դառնա հավատքի կենդանի ապրում և ոչ թե հիշողություն»: Կոչելով միասնության, Նորին Սրբությունը մեջբերեց Հակոբ Նալյան Պատրիարքի խոսքերը, թե «անմիաբանությամբ մեծերը փոքրանում են, միաբանությամբ՝ փոքրերը մեծանում»:

ԼԻՈՆԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՓԱՐԻԶԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Եկեղեցում, ի թիվս շատ հարգարժան հյուրերի, ներկա էր նաև Թուրքիո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արք. Գալանճյանը, որը բուժական պատճառներով գտնվում էր Լիոնի շրջանում:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԵՏ

Եկեղեցուց Վեհափառ Հայրապետը մեկնեց նախ նահանգապետարան, ուր կրույց ունեցավ նահանգապետ Ժան Գադֆրուայի հետ, ապա՝ քաղաքապետարան, ծանոթացավ կառավարման ընթացքին, հանդիպեց լրագրողների հետ: Վեհափառ Հայրապետը այցելեց նաև Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան և կատարեց հոգեհանգստյան կարգ՝ անմեղ նահատակների հոգիների խաղաղության համար:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Երեկոյան քաղաքի Մշակույթի տանը Նորին Սրբությունը հանդիպեց շրջանի հայ երիտասարդության հետ: Նրանք նախօրոք պատրաստել էին իրենց հետաքրքրող հարցերը, որոնք հիմնականում վերաբերվում էին Հայաստանի ներկա վիճակին, Արցախյան հիմնահարցին, ինչպես նաև հայաստանաբնակ երիտասարդությանը և մեր Եկեղեցու առաքելությանը արդի ժամանակներում:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏԵՍԻՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Հաջորդ օրը, փետրվարի 4-ին, Վեհափառ Հայրապետն այցելություն տվեց Տեսինի հայ համայնքին: Քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում բարեողջույնի խոսքով հանդես եկավ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ղևոնդ ավ. քհն. Հարությունյանը, որն իր խոսքում պատմեց նաև քաղաքի հայ գաղութի մասին: Արժանապատիվ Տեր Հայրը նշեց, որ այսօր Տեսինի շուրջ 2500 հայերն ունեն իրենց ռադիոկայանը, և որ այն կոչվում է «Հայաստան»:

Տ. Ղևոնդը, ավարտելով խոսքը, Վեհափառ Հայրապետին հրավիրեց իր հայրապետական պատգամը տալու ներկաներին: Նորին Սրբությունն իր խոսքում առանձնակի շեշտեց դպրոցի կարևորությունը և ավելացրեց. «Այնտեղ, ուր դպրոց կբացվի, այնտեղ բանտ մը կգոցվի»:

Եկեղեցուց Վեհափառ Հայրապետը այցելեց Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող, ուր կատարվեց հոգեհանգստյան կարգ:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏԵՍԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՊԻԵՌ ՔՐԵՏՈՍԻ ՀԵՏ

Նույն օրը Նորին Սրբությանն ընդունեց Տեսինի քաղաքապետ Պիեռ Քրետոսը: Բարիգալստյան և ողջույնի խոսքերից հետո, Վեհափառ Տերը բարձր գնահատեց քաղաքապետի և քաղաքային իշխանությունների ջերմ վերաբերմունքը հայերի հանդեպ:

Դահլիճը, ուր տեղի էր ունենում հանդիպումը, լեփ-լեցուն էր

տեսինաբնակ հայերով, ինչպես նաև օտարներով, ովքեր եկել էին Հայոց Հայրապետի օրհնությունն առնելու և լսելու նրա հայրական պատգամները: «Դուք այլևս իրավունք չունեք ձեզ գաղթական զգալու: Դուք Ֆրանսայի պատվաբեր քաղաքացիներ դարձաք, Ֆրանսայի եռացող կյանքին մեջ դուք ձեր քրտինքը խառնեցիք»,- իր խոսքում ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը: Նորին Սրբությունը կոչ ուղղեց, որ արդի ժամանակներում ապառողական հոգեբանությամբ տիրապետված ընկերության մեջ կենդանի պահեն մշակութային և հոգևոր բարձր և անանց արժեքները, ճաշակները և գործերը:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ԼԵԱ ԵՎ ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՒԼԼՈՒԿՅԱՆ» ԿԵՆՏՐՈՆ

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց Հայ ժողովրդի կավակ Նապոլեոն Բուլլուկյանի կտակով Լիոնում ստեղծված Հիմնադրամի կենտրոն, որը ընդառաջումն էր հաստատության տնօրեն պրոֆ. Մարիոնիի սիրալիր հրավերի: Հայոց Հայրապետն այստեղ ծանոթացավ հոգաբարձության անդամների և հաստատության անձնակազմի հետ, գնահատեց մշակութային բարձր արժեք ներկայացնող արվեստի գործերը: Ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրված ճաշկերույթին պրոֆ. Մարիոն ջերմ խոսքերով ողջունեց Նորին Սրբությանը և անձնապես ու հանուն հոգաբարձության իր շնորհակալությունները հայտնեց այս բարձր պատվի համար:

Նորին Սրբությունը Ֆրանսերենով արտասանած իր խոսքում նախ օրհնեց հիշատակը Նապոլեոն և Լեա Բուլլուկյանների, որոնք թե՛ Ֆրանսիային, հատկապես Լիոնի շրջանին, և թե՛ ընդհանրապես հայ ժողովրդին մեծ բարերարություններ են կատարել և շարունակում են կատարել հիմնադրամի հաստատումով և գործունեությամբ: Վեհափառ Հայրապետը հատուկ շնորհակալություններ հայտնեց «Բուլլուկյան» հիմնադրամին, որ իր հատկացումներով մշտապես կևոր օժանդակություն է բերել և սատար հանդիսացել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն հայոց կաթողիկոսության ընկերային, կրթական և մշակութային գործունեությանը:

## ՎԵՐԱԴԱՐՁ ՓԱՐԻԶ

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓԱՐԻԶԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻ ՀԵՏ, ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈԹՐ ԴԱՄ ՏԱՃԱՐ

Փետրվարի 5-ին, ավարտելով իր շրջագայությունը Լիոնի շրջանում, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Փարիզ, որտեղ նույն օրը մեծ շուքով ընդունվեց Ֆրանսիայի Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ կարդինալ Ժան-Մարի Լյուստիժեի կողմից: Բարեողջույնի խոսքերի փոխանակումից հետո, կարդինալ Ժան-Մարի

Լյուստիժեի հրավերով, Գարեգին Ա Վեհափառն այցելեց Նոթր Դամ տաճար, ուր Հայ և Կաթողիկե Եկեղեցիների պետերի մասնակցությամբ մատուցվեց երեկոյան ժամերգություն և գոհաբանական աղոթք, Մայր Խորանի վրա երգվեցին Կաթողիկե և Հայ Եկեղեցիների շարականներ և հոգևոր երգեր, որին ներկա էին հայ և օտարազգի մեծաթիվ հավատացյալներ:

Հավարտ արարողության, Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության առիթով, իր շնորհակալական խոսքն ասաց կարդինալ Ժան-Մարի Լուստիժեն:

Այնուհետև Գարեգին Ա Կաթողիկոսը, Ֆրանսերենով իր գնահատանքն ու շնորհակալությունները հայտնելուց հետո, աղոթեց Ֆրանսիայի բարօրության ու բարգավաճման համար:

Ժամերգությունից հետո, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվեց պաշտոնական ընթրիք:

Ապա Վեհափառ Տերը և կարդինալ Լյուստիժեն ունեցան առանձնապրույց, որի ընթացքում Նորին Սրբությունն ու կարդինալ Լյուստիժեն խոսեցին աշխարհում տիրող իրավիճակի և միջեկեղեցական հարաբերությունների մասին, ինչպես նաև անդրադարձան քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությանն առնչվող հարցերին:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Հինգշաբթի օրը, փետրվարի 5-ին, Փարիզում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ֆրանսիա կատարած այցելության առիթով:

Ընդունելությանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ Ռ. Գայնավը, Փ. Տևեճյանը, Ա. Սանտինին, Լ. Մերմայը, Փ. Ստեֆանին, Ժ. Սեթլենժեն, արտաքին գործոց նախարարության ներկայացուցիչներ, Ֆրանսիայում հավատարմագրված արտակարգ և լիապոր դեսպաններ /Ուկրաինա, Ռուսաստանի Դաշնություն, Սիրիա, Լիբանան Հունաստան, Վատիկան և այլն/:

Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիապոր դեսպան Վիգեն Չիտեչյանի բարեողջույնից հետո, շնորհակալության խոսք ասաց Հայոց Հայրապետը՝ իրեն համարելով առավել երջանիկ, քան իր երջանկահիշատակ նախորդները, քանի որ վերջիններս թեև այցելել են Ֆրանսիա, սակայն երբեք չեն հյուրընկալվել վերանկախացյալ ու ապատ Հայրենիքի դեսպանի կողմից:

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ՓԱՐԻԶԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փետրվարի 6-ին Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ՝ ի հիշատակ Սրբոց Վարդանանց: Օրվա պատարագիչն էր Վեհափառ Հայրապետի գավազանակիր Անուշավան աբղ. Ժամկոչյանը, քարոզիչը՝ Վեհափառ Հայրապետը:

Արարողությանը ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պաշտոնատար և դիվանագիտական անձինք, հայ հավատացյալ ժողովուրդը:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում բացատրեց «եկեղեցի» բառի հարապատ և ամբողջական իմաստը, շեշտեց, որ բուն եկեղեցին հավատացյալներն են և օրինակ բերեց Ավարայրի ճակատամարտից առաջ Եղիշեի այն խոսքերը, թե «ամեն մեկ կինվոր ինքն իր անձի մեջ մի եկեղեցի էր»: «Հող ունենալը հանգրվան մըն է: Արժևորելը, կյանքի կոչելը՝ հայու մեր պարտականությունը», - եզրափակեց Վեհափառ Հայրապետը:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԺԱԿ ՇԻՐԱԿԻՆ

Վեհափառ Հայրապետի անդրանիկ Հայրապետական այցելությունը Ֆրանսիա եզրափակվեց Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակի հետ հանդիպումով:

Փետրվարի 6-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսին «Էլիզեի» պալատում ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակը:

Պալատի սրահներից մեկում հավաքվել էին ֆրանսահայ համայնքի մի քանի տասնյակ ներկայացուցիչներ, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, Ֆրանսիայում Վատիկանի պապական նվիրակը, Հույն Եկեղեցու ներկայացուցիչներ, ինչպես նաև Փարիզի Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ կարդինալ Ժան-Մարի Լյուստիժեն:

Նախքան պաշտոնական հանդիսությունն ու հանդիպումը, շուրջ 40 րոպե տևած առանձնապրույցի ընթացքում պրն. Շիրակն ու Նորին Սրբությունը խոսեցին Հայաստանի ներկա կացության, երկու երկրների փոխհարաբերությունների, ղարաբաղյան խնդրի կարգավորման, Հայ Եկեղեցու առջև ծառացած խնդիրների շուրջ:

Զրույցից հետո «Էլիզեի» պալատի հանդիսությունների սրահում Ֆրանսիայի նախագահը Վեհափառ Հայրապետին և Գյուտ արք. Նագգաշյանին պարգևատրեց Ֆրանսիայի Հանրապետության Պատվո Լեգեոնի Հրամանատարի և Սպայի աստիճանի շքանշաններով:

Այս առիթով իր արտասանած գրավոր ելույթում նախագահ Շիրակը հայտնեց, որ ֆրանսահայ համայնքը ամենամեծն է Եվրոպայում և երկու աշխարհամարտերի ընթացքում իր արյունն է թափել Ֆրանսիայի համար, իսկ այսօր իր տաղանդն է ի սպաս դնում երկրի բոլոր բնագավառներում: Ֆրանսիայի նախագահը անդրադարձավ նաև Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, ինչպես նաև 1988 թվականի երկրաշարժին՝ ընդգծելով. Ֆրանսիայի հատուկ վերաբերմունքը Հայաստանի հանդեպ: Պրն. Շիրակը պատրաստակամություն հայտնեց նաև աջակցելու ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում արդար լուծում գտնելու առնչությամբ: «Մենք շարունակելու ենք օգնել Հայաստանին, մանավանդ Ղարաբաղի հակամարտության

ՍՏԳԷ ՑԿՄԻՍՊՇՊՈԷ ԿՍԳՊՊՈՉՊՈԺՉ

ԺՂՈՏՈՂՈԱՈՅՆ ՎԵՌՎՈՂՈՒՄ

ԻՍԱԶՂԱՍԻՈՍՈԵՏՈԼ ՂՈԿՈԷՄՈՊՉՈ

ԻԶ ՂՈԿՈՄԱՍԻԶԵԱԷ ՎՈԶԱ ԶՈԷՈՈՂՈՄԱՓ ՁՈԻՏՈԼՈՇՄԱՉ

ԾՏԶԼՈՄԶՈԷ ՍՈՓՈԷԶԻ ՈՎՍԿՈԺ ՎՂՈՄՈԼՄԱՂՇՈՍՈ ՎՇՎՄՈՓ



հարցում տևական լուծում գտնելու համար, որպեսզի Ղարաբաղի հավատացյալները կարողանան գործադրել իրենց պաշտամունքը Արցախի 1600 եկեղեցիներում»,- ասաց Ժակ Շիրակը:

Պարոն նախագահն ընդգծեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Ֆրանսերեն լեզվին տիրապետելու և այդ լեզվի տարածման պաշտպան լինելու հանգամանքը: Ժակ Շիրակը Հայոց Հայրապետին գնահատեց Կիլիկիայի և Ս. Էջմիածնի Կաթողիկոսություններում կատարած նշանակալից դերի և մանավանդ դրանց մերձեցման համար տարած աշխատանքների, իսկ Գյուտ արքեպիսկոպոս Նազգաշյանին՝ Ֆրանսիայի հայ համայնքին մատուցած երկարամյա ծառայությունների համար:

Վեհափառ Հայրապետն իր պատասխան խոսքում նախ անդրադարձավ այն իրողությանը, որ իր աշխարհայացքի կայմավորման մեջ մեծ դեր է ունեցել ֆրանսերեն լեզուն, մշակույթը: Նորին Սրբությունը շեշտեց նաև այն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի, մանավանդ արևմտահայության մշակութային վերապարթոնքի մեջ մեծ է եղել ֆրանսիական մտքի և մշակույթի ազդեցությունը:

Խոսքի երկրորդ բաժնում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայաստանի ներկա կացությանը և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումով հայ ժողովրդի մեջ առաջ եկած հոգեբանական հիմնական փոփոխությանը: Նոր պետություն կայմավորելը չափազանց դժվար գործ է և Հայց. Եկեղեցին Մայր Աթոռի գլխավորությամբ կոչված է բարոյական և հոգևոր առողջ քարոզությամբ սատար կանգնելու Նոր Հայաստանի ազատ ու անկախ պետականությանը:

Վերջում Հայոց հայրապետը ջերմ շնորհակալություններ հայտնեց հայ ժողովրդին և Հայաստանի Հանրապետությանը Ֆրանսիայի կողմից առ այսօր ընծայված կենսական օժանդակության, ինչպես նաև իրեն ընծայված Ֆրանսիայի Հանրապետության բարձրագույն շքանշանի պատվի համար:

## ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՓԱՐԻԶՈՒՄ

Վեհափառ Հայրապետը մեկնումից առաջ, Փետրվարի 7-ին, առավոտյան, հրավիրել էր Կաթողիկոսական պատվիրակ Գյուտ արքեպիսկոպոսին, Հայրապետական պատվիրակի փոխանորդներ Տարոն և Նորվան եպիսկոպոսներին և Ֆրանսիայի եկեղեցական մարմիններից մեկական ներկայացուցիչների, նախ իր շնորհակալությունները հայտնելու նրանց նման ընդունելության համար, կիսելու նրանց հետ իր տպավորությունները և ապա խորհրդակցելու ֆրանսահայության թեմական-կայմակերպչական հարցերի մասին:

Բոլոր մասնակիցները, հոգևորական թե աշխարհական, ազատորեն և նախանձախնդրաբար հայտնեցին իրենց տեսակետները և կատարեցին որոշ թելադրանքներ թեմի կառուցվածքի մասին:

Վեհափառ Հայրապետը մեծ ուշադրությամբ լսեց բոլոր

*արտահայտվողներին և հավաստիացրեց, որ այդ բոլոր հարցադրումների լույսի ներքո ապագայում խնդիրները պիտի քննարկվեն Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովներում:*

***

*Այսպիսով, ավարտվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ հովվապետական-հայրապետական այցելությունը ֆրանսահայ գաղութին, այցելություն, որ իր բոլոր մանրամասներով խոր հետք թողեց Հայրենիքից հեռու իր բախտը գտած, իր օջախը հիմնած, սակայն միշտ Հայրենիքի տեսիլքով ապրող հայի համար, այցելություն, որ ֆրանսահայության պատմության մեջ արձանագրվելու է որպես հայրական այցելության ամենագեղեցիկ ու անմոռանալի օրինակ:*

*Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադառնալուց հետո, Վեհափառ Հայրապետն իր գնահատանքի և օրհնության խոսքն ուղղեց ֆրանսահայությանը:*